

551

408.9  
Q - 58



24 APR 2011  
17889960

"Հայկ" ընտր. Զարգար. բարեկարգութաշր:

400  
2584-ԿՆ  
11

Ա. Թ. ԱՆԴՐԵԵՎ  
408.9  
Q-58 Առ



# ԷՍՊԵՐԱՆՏՈ

միջազգային լեզուն

ՆՐԱ ՆԵՐԿԱՆ, ԱՆՁԵԱԸ ԵՒ ԱՊԱԳԱՆ:

Նույրած է լեզուի հեղինակին

Դ. Բ. Լ. ԶԱՄԷՆՀՕՅԻՆ:



Թուսերեկն բնագրեց գրեոյլիս հեղինակի բարեկած քոյլ-  
աւորինով բարգմանեց

Ա. Զ. Ա. Լ. Ա. Լ. Ե. Ա. Ն.:

Ա. Պ. Անդրեևъ. ԷՍՊԵՐԱՆՏՈ պահպանական լեզու.  
Его настоящее, прошлое и будущее. Перевод с русского

И. Джалалина 1922

Б А К У

Электропечатия газ. „Баку.  
1913.



Սրանից մի քառորդ դար առաջ,—իսկապէս 1887 թւականի յուլիսի 14-ին<sup>\*)</sup>) Վարշաւայի մէջ տեղի ունեցաւ շատ համեստ (արտաքին տեսակէտից) և շատ քչերից նկատուած մի անցք. Կելտների տապարանի մէջ, նովօլիպցիէ փողոցում, լոյս տեսաւ մի փոքրիկ, 40 երեսից բաղկացած, բռոշիւր այս վերնագըռով. «Դ-ր Էսպերանտօ. Միջազգային լեզու. Յառաջաբան և լիակատար դասագիրք ուռւսների համար։ Գինն է 15 կոպ.»։ Մի ամիս յետոյ այդ բռոշիւրին հետևեց նոյն տեղը տպագրուած բոլորովին նոյնանման մի այլ բռոշիւր, բայց ոչ այլ ևս ուռւսներէն, այլ լեհերէն լեզուվ, որովհետև նա նշանակուած էր լեհացիների համար։

Են օրից անցկացաւ քառորդ դար։ Դ-ր Էսպերանտօի համեստ բռոշիւրը աննկատելի չըմնաց։ Նրա հանճարեղ գործը—նոր միջազգային լեզու, —ստանալով հեղինակի կեղծ անուան համաձայն, Էսպերանտօ անունը, տարածուեցաւ ամբողջ աշխարհիս երեսին։ Խորհագոյն իդէանե-

<sup>\*)</sup> «Universo», 1912 թ. kajero III, 169—170 էր.

ըից մէկը, որ երբ և իցէ ծնուել էր մարդկային մտքի մէջ, գաղափարը՝ միացնել հողագնդի բոլոր ազգութիւնները ընդհանուր և ամենքին հառկանալի լեզուի միջոցով,—առաջին անգամը Բաբելոնեան աշտարակաշինութիւնից յետոյ ստացաւ արժանաւոր արտայայտութիւն. և աշխարհայանձին նրա բազմաթիւ ներկայացուցիչների, ամեն տեսակ ցեղերի, ազգութիւնների, ամենաստարբեր գասակարգերի և կրթութեան խոնարհուցան հեղինակի հանճարի առաջ: Բոլոր երկրների և ազգութիւնների միլիոնաւոր անձինք յարեցան էսպերանտոզմի շարժմանը և գուցէ հեռու չէ այն օրը, երբ ամենանշանաւոր պետութիւնները—աշխարհիս երեսին—ներմուծեն էսպերանտո լեզուի դասաւանդութիւնը, որպէս պարտաւորական առարկայ: Եւ այդ օրը կըլինի մարդկութեան ամենափառահեղ հանդէսը, որովհետև այն ժամանակ չեն դանուիլ իրար չհասկացող մարդիկ, չնայելով նրանց մայրական լեզուների զանազանութեանը, այն զանազանութեանը, որ այժմս զնում է նրանց համը մարդկանց կարգը:

Բայց մինչև չենք հասել այդ բարձր գաղափարին, աչքէ անցնինք էսպերանտոսների անցկացած ձանապարհը, հաշուենք այն, ինչ նրանք կատարել են յանուն իրանց ուղեցոյց կանանչագոյն աստղի, իսկ դրա հետ ի միասին ամենա-

կրծատ կերպով կանգնենք միջազգային լեզուի հարցի վերայ ընդհանրապէս և նրան լուծելու միջոցների վերայ մասնաւորապէս:

1.

ԿԱՐԵՒՈՐ է ՍՐԴԵՕՔ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒ:

Տարօրինակ և ծաղրալի կը լինէր այդ հարցը ներկայ ժամանակը—այն ժամանակը, երբ աւելի և աւելի ուժեղ և լայն է տարածւում ազգերի համախմբումը: Նրանց քաղաքական, հասարակական և մտաւոր ասպարէզներում և ապացուցանում է մի ընդհանուր օժանդակ լեզուի կարևորութիւնը, որ կընեռացնէր մեզանից մի շարք լեզուների ուսանելու անհրաժեշտութիւնը, այն էլ առանց յոյսի, միևնույն ժամանակ, հասկանալի դառնալ բոլորին և հասկանալ նրանց լեզուները: Եթէ XIX դարում—շոգիի դարում—այդպիսի ընդհանուր միջազգային լեզուի կարիքը զգացւում էր խիստ և սուր կերպով, այս սկսւող XX դարում—էլեքտրականութեան, օդագնացութեան և լարագերծ հեռագրի դարում—նա դարձաւ որոշակի և ամենաանհրաժեշտ կարիք: Օրից օր ազգերին իրարուց զատող սահմանները աւելի և աւելի քայլայւում են: Երկաթուղիների և շոգենաւերի շնորհիւ մարդու մի քանի շարաթուայ ընթացքում պտոյտ է կատարում ամբողջ հողագնդի շուրջը,

հեռագրների և հեռախօսների շնորհիւ, մարդկային միաբը կայծակի արագութիւնով հաղորդում է քաղաքից քաղաք, երկրից երկիր։ Իսկ երբ օդաղնացութիւնը դարձնէ մարդուս օդին լիշտող, —բոլոր երկրային միջապատերը կը կործանուին ինքն իրանց... և կը մնայ միայն մի միջնապատ՝ սոսկալի այլակեզութիւնը—բոլոր այն ազգերի մէջ, որ բնակում են հողագնդի վերայ, այլակեզութիւն, որ ծանրանում է մարդկութեան վերայ, որպէս Աստուածային անէծք, որպէս տաժանելի պատիժ, որ գրուած է մեր հախահայրերի վերայ. իրանց՝ Աստծուն հաւասար համարելու համար։

նութիւններով, նոյնպէս և առանձին մարդկանց ջանքով անընդհատ ծագում էին և ծագում են պէտպէս կամ մշտական, կամ ժամանակաւոր միջազգային կազմակերպութիւններ, մի որոշ ժամանակամիջոցի կարիքը լրացնելու համար: Բաւական է ցոյց տալ այնպիսի միջապետական միախմբությունները, ինչպէս են, համաշխարհային պօստային գաշնակցութիւնը<sup>\*</sup>), եռուագրական և ըաղիօհեռուագրական գաշնակցութիւնները՝ դաշնակցութիւն առեւտրական ծանրութիւնները տեղափոխելու համար, գաշնակցութիւն երկաթուղային, միջազգային օրէնսժողով ծովային ազդանշանի կամ ուղղակի բազմաթիւ կազմակերպութիւններ, որ ստեղծում են մասնաւոր մարդկանց նախագծով և որոնք բաւականացնում են մարդկային մարմնի և մտքի գանազան պահանջները: Այդ կերպ փորձի առաջին օրինակն էր խաղաղութեան կօնդրէսը, որ կոչուեցաւ կօնդոն 1843 թ., իսկ այդ ժամանակից մինչև 1910 թ. կայացել են 2000-ից աւելի միջազգային նիստեր և ժողովներ (նրանցից 800-ը վերջին տասնեակում) և հինգուել են 250 մշտական համախըմբութիւններ, որոնք ձգառում են իմաստասիրել համաշխարհային նշանակութիւն ունեցող խընդիրներ:

<sup>\*\*) Այժումս այդ դաշնակցութեանը չեն յարել  
միայն Աւգանտատանը և Բելուջիստանը:</sup>

Եթէ վեր տունենք օրինակ. արդիւնաբերութեան և շրջանառութեան լայնատարած շրջանը ապրանքների համար, մենք այդտեղ կը տեսնենք՝ մի կողմից մի ամբողջ կարգ միջազգային արէստաների (մրցաշինջ ընկերութիւններ), կարտեներ կողմից աւելի և աւելի ուժեղացող աշխատաւոր դասի համախմբումը, նա համախմբում է ինչպէս իրանց ազգային շրջանում, նոյնպէս և նրանից դուրս Ներկայումս հաշւում են արդէն 30-ից աւելի միջազգային աշխատաւորների ֆեդերացիաներ (գաշնակցութիւններ) ամեն տեսակ մասնագէտների և այդ բոլոր ֆեդերացիաները միջազգային սեկրետարիատի միջոցով։ Այդ բում Եւրոպայի և Ամերիքայի մէջ համում է արդէն 10 միլիոնի... Այդ շարժումը այնքան ուոր համարեց կոչել առաջին «միջազգային կօնդրէս աշխատաւորաց աշխատանքը կանոնաւորելու համար», իսկ այնուհետև հիմունքաւ Բազէօրինական ինքնառաջանութիւն աշխատաւորների ըան կից «միջազգային աշխատաւորների Բիւո գրասենեակ»։ Այդ համախմբումներին պէտք է աւելացնել և կօօպերատիւ (ընկերակցական) հիմ-

նարկութիւնները, որոնց շարքում անուանենք «միջազգային կօօպերատիւ լիգան» (գաշն), միջազգային կօնֆեդերացիան, կօնֆեդերացիան հողագործական ընկերութիւնների և նոյնպէս «միջազգային ձեմարան (ինստիտուտ) միջին դասաշխագային մամարան (ինստիտուտ) միջին դասակարգին վերաբերեալ ինսդիբները իմաստասիրեկարգին մշտական կոմիտետ լու համար» և «միջազգային մշտական կոմիտետ աժանագին բնակարանների»։

Եթէ մենք մի կողմը թողնենք բոլոր միջանկեալ հիմնարկութիւնները և անցնենք մարդկային մտքի ասպարէզը, այստեղ էլ մենք չենք գտնիլ մաքուր և գործադրական գիտութիւնների ոչ մի ասպարէզ, որը չկարօտէլ և չդիմէլ իւր ներկայացուցիչների միջազգային ժողովներին։ Այսպէս աստղաբաշխութիւնը ունի «միջազգային կոմիտետ երկնքի մակարթակը կազմելու համար» (նրա կազմի մէջ մտնում են 19 աստղաբաշխական գիտարաններ)։ Բնագիտութեան ասպարէկան գումարի մէջ մասնութիւնը է 1900 թ. «մշտական միջում հիմնարկուած է 1900 թ. «մշտական միջազգային մասնախումբ ժամանակը չափելու հաշազգային մասնախումբ ժամանակը չափելու համար», այնուհետև «միջազգային կօնֆեդենցիա մար», այնուհետև «միջազգային կօնֆեդենցիա միջօրէականը ընտրելու համար», մասնագիտական մասնախմբեր, էլեքտրական, լոյսաւագիտական մասնախմբեր։ Գեօլոգիայի և չափական և այլ միաւորների ասպարէզներում, ի բաց առած մեաւըօլոգիայի ասպարէզներում, կարելի է մատնանիշ բազմաթիւ կօնդրէմները, կարելի է մատնանիշ լինել այնպիսի մշտական հիմնարկութիւնների վեցիներ այնպիսի մշտական հիմնարկութիւնների վե-

բայց, ինչպէս «միջազգային սառցադաշտերը իմաստափակելու ընկերութիւն», «ինստիտուտ հրաբուխները իմաստափակելու համար», «մետեօրոլիքական կոմիտետ», որ գործում է սկսած 1873 թուականից և հիմնարկել է գանազան մասնագիտական մասնաժողովներ և այլք: Բնական գիտութիւնները լոյս աշխարհ հանեցին բազմաթիւ կօնքրէսներ և ընկերութիւններ բոլոր երկրների և ազգութիւնների մասնագէտներից: Բուսագէտները, օրինակ, կազմակերպել են «միջազգային բուսաբանների լնկերութիւն»: Կենդանաբանութեան վերաբերեալ կօնքրէսները սկսուեցան 1889 թ. և կարողացան ներմուծել միատեսակ կանոններ տեսակների և ձեռքի գանազանութեան: Բնախօսները ունին երկու միջազգային լաբորատորիաներ (աշխատանոցներ) „Institut Marey“ և „Mont-rose“ լաբորատորիան: Անատօնները և քիմիագէտները ունին իրանց միջազգային միութիւնները: Եւ կազմակերպելով այդ բոլոր հիմնարկութիւնները առանձնագէս, ամենահոչակաւոր աշխարիս իմաստագէրները ստեղծեցին, «Ակադեմիաների միջազգային դաշնակցութիւն», որը ցոյց է տալիս իւր օգնութիւնը կամ հովանաւորութիւնը այնիպիսի ինքնուրոյն հիմնարկութիւններին, ինչպէս Institut Marey կամ այնպրափ համաշխարային ձեռնարկութիւններին, ինչպէս ցուցակ գիտնական հրատարակութիւն-

Ների, Լիյրնիցի շարադրութիւնների նորոք լոյս  
ընծայութիւնը և այլն:  
Ես չեմ հետեւելու այլևս լափոնտէնի հե-  
տաքրքիր զեկուցմանը, որը ցոյց է տալիս քայլ  
առ քայլ ազգերի և մասնագէտների համախմբումը  
բժշկականութեան, տեխնալոգիայի հողագործու-  
թեան, իրաւաբանական գիտութիւնների, սացի-  
թեան, ֆիզիականութեան, արուեստագիտու-  
թիզմի (խաղաղասիրութեան), արուեստագիտու-  
թեան, հաւատաբանութեան, մանկավարժու-  
թեան, սօցիալոգիայի, վիճակագրութեան, ցու-  
ցահանգէսական գործի, սպօրտի (ցիկլիզմ, տու-  
րիզմ, աւտոմոբիլիզմ, օտագնացութիւն, մար-  
մամարզութիւն և այլն) լրագրական գործի և  
այլն և այլն: Սակայն ես չեմ կարող չլիշել այս-  
տեղ նրա վերջաբանը. «Այդպէս է, ասում է  
նա, միջազգային, միջնադաւանական, մէջե-  
ղական մարդկանց կատարած աշխատութիւնը:  
Նրանց համար այլևս գոյութիւն չունին տէրու-  
թիւնների սահմանագծեր, նրանց համար աշ-  
խարհսմէի ընդհանուր կայսրութիւն է, որի ան-  
դամներն են նրանք: Բայց և այնպէս նրանք էլ  
որոշակի չեն հասկանում մշտագէս, թէ նրանք  
համախմբուած աշխատում են՝ մի ընդհանուր  
միջազգային կեանք ստեղծելու: Այդ զգացմուն-  
քը արդնացնելու և նրան մարմացնելու համար  
կազմակերպուած է «կենտրոնական բիուօն մի-  
ջազգային ասացիացիների», որը կը տանէ մարդ-

կութիւնը դէպի աւելի և աւելի մեծ համերաշխութիւն և աւելի համերաշխ աշխատակցութիւն կեանքի ամեն մի ասպարէզում։ Նրա հիմնագրողները շեշտում են, որ մարդկային գիտակոյութիւն ունին ընդհանուր շահեր, որոնք պէտք է իմաստասիրուեն խմբովին՝ տեղեակ և գիտնական մարդկանց կողմից։ Այս պատճառով գոյութիւն ստացաւ առաջին «միջազգային ընկերութիւնների համաշխարհային կոնգրեսը», նաև իմաստասիրեց բազմաթիւ համապատասխանող հարցեր (և ի միջի այլոց այդ միջազգային դաշնակցութիւններին և միութիւններին հարկաւոր լեզուի հարցը). այդպիսի կոնգրէսների վերաբերութեամբ «միջազգային ասօցիացիների կենտրոնական բիւոն» ներկայանում է մշտապէս գործադիր գործօն։ Այդպիսով կազմուեցաւ մի կենտրոն, որի շուրջը կարող են համախմբուիլ բոլոր միջազգային կազմակերպութիւնները։ Որպէս ազատ կամքի և համերաշխ աշխատակցութեան պառող նաև ներկայանում է ամենաճարագար մարդկութեան համախմբման»\*):

\*) Տես №№ 117 և 118, «Esperanto» ամսագրի մէջ (Ժենեվ 20 Փետր., 5 Մարտի 1912 թ.), ուր սետերէն:

Իսկ մարդկութեան այդպիսի շարունակ բարգաւաճող համախմբման ըլջանում հնարաւոր է պարզեց մնալ, այժմումս գոյութիւն ունեցող, արդեօք մնալ, այժմումս գոյութիւն մէջ, հնարաւոր է արագգերի այլական պատերի կորստաբեղեօք չգգալ այն չինական պատերի կերպարանը ընկերութիւնը, որ զանազան լեզուների կերպարանը կանգնած են ազգութիւնների մէջ, քովամուր կանգնած են ազգութիւնների մէջ, ստեղծելով նրանց ըլջանում փոխարձ մէկը ստեղծելով նրանց ըլջանում փոխարձ ատելութեան խորխորատ։

Ամբողջ մարդկութեան օդտին անհրաժեշտ է ընդունել մի ընդհանուր բոլորի համար օժանդակ լեզու, որը ամեն մի անհատի համար գույթիւն ունենալով, նրա մայենի լեզուին կից, յութիւն ունենալով, նրա հեշտ հնարաւորութիւն, մատակարար էր նրան հեշտ հնարաւորութիւն, կարիք զգալիս, յարաբերութեան մէջ մտնել կարիք զգալիս, յարաբերութեան մէջ մտնել մնացեալ ազգութիւնների և ցեղերի հետ։

II.

Ո՞ր լեզուն Պէտք է կիսի Միջազգային։

Դառնալով գէպի այն հարցը, թէ ո՞ր լեզուն պէտք է վեր առնել, որպէս միջազգային, մենք պէտք է կամ վեր առնել գորա համար մեռած լեզուներից մէկի առաջ։

ա) կամ վեր առնել գորա համար մեռած լեզուներից մէկը։

բ) կամ վեր առնել այժմեան ազգային լեռներից մէկը.

գ) և կամ վերջապէս, ընտրել մի արհեատական լեզու:

Քննենք կարդով այդ հարցերի իւրաքանչիւրը առանձին:

### 1) Մեռած լեզուի ընտրութիւնը:

Այդպիսի լեզուներ երկուս են՝ յունարէն և լատիներէն։ Մնացեալների մասին չարժէ, ի հարկէ, խօսել։ Սակայն և այդ երկու լեզուներից յունարէնի վերայ չի կանգ առնի ոչ մի լուրջ իմաստապէտ։ Մնում է, ուրեմն միմիայն լատիներէն լեզուն, որը արդէն միջին դարերում մօտաւրապէս միջազգային լեզուի դեր էր կատարում։

Հարցը այդ կերպ լուծելու կողմնակիցներ կան և այժմս։ Կարելի է մինչև անդամ ցոյց տալ լազգիներ, որոնք լատիներէն լեզուն, որպէս՝ օժանդակ լեզու միջազգային յարաբերութեան, իրանց պաշտամնութեան տակ էին առում։ Այդպիսիներ են՝ Միացեալ Նահանգներում մի ժամանակ լոյս տեսնող «Praeco latinus» (լատինական չամբաւաբերը), որ տպագրում էր լատիներէն՝ ոչ միայն լուրջ յօդուածներ, այլ և յայտարարութիւններ երկաթի վաճառման և կորած շան մասին և նրա մրցակից «Vox-urbis»,

որ հրատարակւում էր Հռովմում և լոյս էր ընծայում մի ժամանակ շարադներ (հանելուկներ)՝ Լեռն XIII փափի երեխայական հասակի պտուղը։

Բայց և այնպէս լրջօրէն խօսել հարցի այդ կերպ լուծման մասին հազիւ թէ կարելի բան է։ Եւ իրաւի, ով մեզանից չգիտէ, ինչպիսի ահազին աշխատանք արժէ գիմնազիատներին եօթնամեայ պայքարը լատին քերականութեան դէմ և հըքան աննշան հետևանքի են հասնում նրանք գիմնազիական դասընթացը աւարտելուց յետոյ, իսկ միջազգային լեզուն պէտք է լինի ամենքին մատչելի և որքան կարելի է դիւրին։

Միւս կողմից, որպէս մեռեալ լեզու, որպէս մի լեզու, որ արդէն շատ դարեր ընդհատել է իւր առաջընթացութիւնը, լատինական լեզուն բոլորովին անընդունակ է արտայայտելու այն հասկացողութիւնները, որոնք մտել են կեանքի մէջ Հռովմէական կայսրութեան անկումից յետոյ, իսկ այդպիսի հասկացողութիւնները անթիւ անհամար են։ Վեր առնենք օրինակ. այսպիսի սովորական մի նախագասութիւն. «Ես հանեցի թաշկինակը իմ բրիւկի գրպանից»։ Ի՞նչպէս նըրան թարգմանել լատիներէն։ Զէ որ հռովմայեցիները ոչ թաշկինակ ունեին, ոչ գրպան և ոչ իսկ բրիւկ... Արդէն ի՞նչ ասել այլ ևս այն անթիւ հասկացողութիւնների մասին, որ գտնուում են գիտութեանց և արուեստների մէջ, որոնց

մենք իւրայնացլել ենք, մարսել ենք, բայց ուրոնց մասին հին Հռովմը չունէր լիովին ոչ մի հասկացողութիւն։ Հարկաւոր կըլինէր նոր բառեր հնարել, նմտնեցնելով նրանց հնադարեան անուններին և հետեարար կազմել մի ամբողջ նոր բառարան, որ ոչ մի նմանութիւն չէր կարող ունենալ Ցիցերոնի և Վիրոգիլոսի լեզուին։

2) Որ եւ է նոր լեզուներից մեկի ընտրութիւնը:  
Այս ուղղութիւնով նոյնպէս լեզուի հարցը  
անհնար է լուծել գրականապէս:  
Երկու գլխաւոր պատճառ կայ:

Առաջինը մեծ պետութիւններից ոչ մէկը  
չի համաձայնիր յօժարակամ ընդունել մի այլ  
մեծ պետութեան լեզուն, որպէս միջազգային և  
պարտաւորական, որովհետեւ այդ կը տար վեր-  
ջինիս ամենամեծ օգուտներ և ահազին առաւե-  
լութիւն միւս պետութիւնների հանդէպ. իսկ ըն-  
տրել մի փոքր տէրութեան լեզու անմիտ բան  
կը լինէր, որովհետեւ հարկաւոր կը լինէր, ամեն-  
քին էլ սովորել այդ լեզուն, իսկ աշխարհս այդ  
կողմից բոլորովին պատրաստուած չէ ընդունե-  
լու մի որ և է այլ լեզու։ Ինչպէս փոքր ի շատէ,  
պատրաստուած են գործադրւելու գերմանական,  
ֆրանսիական կամ անգլիական լեզուները։

Երկրորդը այժմեան լեզուներից իւրաքանչիւրի իւմաստասիրութիւնը, քանի որ այդ լեզու-

17. II. 1922  
ДОЛГИНА, МЯСНИКИАН

վերջապէս գերմաներէն լեզուի մէջ կի՞ն մարդը չեղօք սեռի է և այն էլ իւր կեանքի բոլոր փոփութիւնների մէջ (das Weib, das Fraulein, das Mädchen). Այս բոլորը այնպիսի հարցեր են, Միայն մի պատասխան կարող է լինել. „այդ այդպէս է ընդունուած. վերջացաւ գնաց»... իսկ վեր առէք բայերի վերջաւորութիւնների հարցը աշխարհիս չորս գլխաւոր լեզուների մէջ. ոռուսէնի մէջ նրա թիւը 157 է, գերմաններէնի մէջ 364, անգլիերէնի մէջ 651, իսկ ֆրանսներէնի մէջ 2265... իրաւի դժուար չէ մտածմունքի մէջ ընկնել, լուծելիս այն հարցը, թէ ո՞ր լեզուն պէտք է ընտրել, որպէս միջազգային:

Քերականութեան տեսակէտից այդ բոլոր լեզուներից ամենահեշտն է, անշուշտ, անգլիեկան անունների սեռերից: Բայց ով որ, գոնեա, քիչ թէ շատ պարապել է այդ լեզուով գիտէ, որ այդ լեզուի արտասանութիւնը վերջին աստիճանի դժուար է: Լայն հեղինակութիւն ունեցող նուարի անգլիերէն լեզուի ձեռնարկի մէջ, 14 երես մանր տառերով տպած, նույիրուած են արտասանութեան կանոններին և շեշտերին, սաւամեն ինչ և ամենայուսալին այն կըլինի, որ դուք նրանց հաւատ չ'ընծայելով, բառարանի մի-

ջոցով կամ ուսուցչի օգնութիւնով սովորէք առունձին ամեն մի բառի արտասանութիւնը: Որպէս կատակ ասում են, թէ անգլիերէն գրուած է «Կոստանդիօնօպոլիս», իսկ կարդացւում է «Երուսաղէմ»... և այդ կատակը հեռու չէ ձըշմարտութիւնից: Ահա, օրինակ. Psyche բառը— (մեծ հայելի ոտքերի վերայ) կարդացւում է «սայէկի», իսկ պսիխիատրիա—psychiatry—կարսայէկի, իսկ պսիխիատրիա—soldier—դացւում է «սայէկայէտրի», զինուոր—soldier—կարդացւում է «սօօլշեր», իսկ նրա մեծաւորը, կոլոնel—անուանւում է «կեօրնել». գնդապետը, kolonel—անուանւում է «կեօրնել».

Բայց ֆրանսներէն լեզուն էլ ուղղագրութեան եղանակով հեռու չէ մնացել անգլիական արտասանութիւնից: Հետևեալ պատմական տեղեկութիւնը կարող է զեղեցիկ պատկերի տեղ ծառայել:

Մի անգամ Նապոլէօն երրորդի մօտ, երեկոյթի ժամանակ, գտնւում էին մի քանի ակադեմիկոսներ, խօսակցութիւնը կանգնեցաւ քերականութեան դժուարութեան վերայ և ակադեմիկոս Մերիմէն առաջարկեց փորձ անել. թելադրել ներկայ գանւողներին մի երես

մի ինչ որ Փրանսիական կլասսիկի հեղինակութիւնից, կայսրը և կայսրուհին, Եւգենիան, համաձայնեցան մասնակցել այդ փորձին: Բայց երբ աւարտեցին թելադրութիւնը, դուրս եկաւ, որ կայսրը, մի քանի լուրջ պատմական շարադրութիւնների հեղինակը, 35 սխալ էր արել, իսկ կայսրուհի Եւգենիան, իւր ժամանակի ամենալուսաւոր կինը, 50' սխալ էր արել...

Վեր առէք և այդ բոլոր լեզուների իդիօտիզմները (ինքնուրոյն դարձուածքները), առանց նրանց գիտնալու ոչ ոքի չէ կարելի լեզուն տիրապետող ճանաչել... Վեր առէք բայերի գործածութիւնը Փրանսերէն և գերմաներէն լեզուների մէջ. Փրանսերէն լեզուն միայն անցեալի համար ունի հինգ ժամանակ և հարկաւոր են երկար տարիներ, որ գործնականապէս հնարինի կատարելապէս յաղթել այդ բոլոր ժամանակների նրբութիւնները և նրանց զանազանութիւնները, Գերմաներէն լեզուի մէջ երեք ժամանակ կան միայն, բայց և այնպէս. մի ուսուցիչ նրանց զանազանութիւնները իւր աշակերտներին պարզելու համար, պէտք է ներկայացնէր հետեւալ համեմատութիւնը. imperfectum—այդ. «մեռուաւ, բայց դեռ շնչում է», perfectum—«մեռուաւ և չէ շնչում», իսկ plusquamperfectum—«մեռուաւ, չէ շնչում և թաղուած է գետնի մէջ»... իսկ Փրանսերէն անցեալ հինգ ժամանակների համար,

իհարկէ, այդ դարսողութիւնն էլ բաւական չէ...

Շատ և շատ կարելի էր դեռ խօսել օտար լեզուները սովորելու գժուալութիւնների մասին: Բայց, ի հարկէ, մեր ասածն էլ բաւական է, ու բովինեաւ արդեօք նում մեզանից սեփական փորովինեաւ և որքան ժամանակ պէտք է ձով յայտնի չէ, թէ որքան ժամանակ պէտք է նույն վատնել և որքան աշխատանք, մինչև անդամ նրա վատնել և որքան աշխատանք օտար լեզուով ձևութեան և ազատ խօսակցութեան մասին չարժէ և խօսել:

Սրանից արդէն պարզ է, որ նման լուսիներէն լեզուի, կենդանի լեզուներից ոչ մէկը չէ կարող և երբէք չի ընտրուի որպէս միջազգային լեզու:

3) Մի որ եւ է արուեստական լեզուի ընտրութիւնը:

Սակայն, եթէ ոչ մեռեալ և ոչ կենդանի ազգային լեզուները պիտանի չեն յիշեալ նպաստակային լեզուները պիտանի չեն յիշեալ նպաստակի համար, ուրեմն բնականապէս նում է տակի համար. ուրեմն բնականապէս նում է միայն մի ճանապարհ. որպէս միջազգային լեզու մի որ և է արուեստական լեզու գտնել:

Արուեստական լեզու ստեղծելու միտքը—շատ հին միտք է: Նրան կազմելու գործում աշխատ հին միտք է:

խատել են բազմաթիւ մեծ հոչակներ, որոնց  
շարքում կարելի է անուանել այնպիսի անուն-  
ներ, ինչպէս Բէկօն Վերուլամեցի, Դեկարտ,  
Պասկալ, Լեյբնից, Վոլտեր, Մօնտեսկյիէ, դե-  
Բրոսսէ, Կօնդիլյեակ, Դիգրօ, Ամպեր, Վօլնեյ,  
իսկ մեզ աւելի մօտ ժամանակը, այնպիսի լե-  
զուագէտներ, ինչպէս Բիւրնուֆ և Յակովը  
Գրիմմ: Վերջապէս կայ և մի ամենամեծ հեղի-  
նակաւոր անձն լեզուագիտական ասպարէզում և  
միևնոյն ժամանակ մեր օրերում, որը անպայ-  
ման համակիր էր. կարելի և ցանկալի էր համա-  
րում արուեստական լեզու հնարելու գործը,—  
դա Մակս Միւլերն է:

Մեծ փիլիսոփայ Դեկարտը դեռ 1629 թ.  
ասում էր իւր ընկեր Մերսենին. «Ես կարծում  
եմ, որ կարելի էր կազմել համաշխարհային ար-  
մատներ և գրաւոր նշաններ, որոնց սովորելը  
կը պահանջէր ամենակարճ ժամանակ»։ Մի ու-  
րիշ 17-րդ դարի մեծ իմաստասէր Լեյբնիցը  
՚ի լոյս ընծայեց իւր բոօշիւրը «Պազիգրաֆիա  
կամ արուեստ մարդուս հասկանալի անել իրան՝  
գրաւոր նշանների օգնութիւնով, որոնք ընդհա-  
նուր են աշխարհիս բոլոր ազգերին, չնայելով  
նրանց լեզուների գանազանութեանը, միայն  
թէ գիտնան այդ բոլորի համար ընդհանուր նը-  
շանները»։ Սակայն գործնականապէս նրան չը-  
յաջողեցաւ իրագործել այդ միտքը... Լեյբնիցին

հետևեցին մի ամբողջ շարք փորձեր նոյն կարգի, սկսած լուրջ փորձերից, արժանի լիուլի ուշա- դրութեան, մինչև կօմիքականները, որոնք կա- րող են միայն ժպիտ պատճառել: Նբանց ի հար- կէ ես ցոյց տալու չեմ, կը յիշեցնեմ միայն, որ այդպիսի փորձերի թիւը վերջին երկու դարե- ամանում հասնում է մինչև հարիւր յիսունի: Եւ չնայելով նրանց անյաջողութեանը, հոչակաւոր Մաքս Միւլերը կարծիք յայտնեց, որ արուես- տական միջազգային լեզու ստեղծելու միաքը իրագործելի է և աւելացրեց դրան: «Ես պնդում եմ, որ այդպիսի արուեստական լեզուն կարող է լինել չափաղանց աւելի կանոնաւոր, աւելի կա- տարելագործուած և աւելի հեշտ սովորելու հա- մար, քան թէ որ և է բնական ազգային լեզու- ներից մէկը»\*):

իսկ եթէ այնուամենայնիւ դրա հանդէպը

\*) Աելքցիզի համալսարանի յայտնի պրօֆեսոր  
վիլ. Օստուալը իւր գեկուցման մէջ (Միւնիստում)  
միջաղգային լեզուի վերաբերութեամբ յայտնեց իւր  
կարծիքը, թէ նրա համար ամենափոքր կարծիքի  
դեպք չկայ, միջաղգային լեզու ստնդելու հնարաւորու-  
զիք չկայ. միջաղգային լեզու ստնդելու հնարաւորու-

յոյց տան, թէ արուեստական լեզուի գիւտը դեռ չէ ապահովում նրա գործածութիւնը ընդհանութիւնու և մինչև իսկ կարծիքի տակ է նրա կենսունակութիւնը, դրա դէմ մենք կարող ենք պատասխանել, թէ ազգերը ընդունել են շատ այդպիսի միջազգային լեզուներ և նրանք վաղուց է գործածական են և փառաւոր կերպով։ Այդ կարգին են պատկանում օրինակ, երաժշտական նօտաների լեզուն, արաբական թուանշանները, ալգերրայական նշանները, հեռազրական նշանները, քիմիական ֆորմուլանները, ծովային աղղանշանները և այն։ Այդ բոլորը ինչ են, եթէ ոչ միջազգային լեզուներ, Այստեղ զանազանութիւնը աւելի քանակական է, քան թէ որակական, որովհետեւ մեր յոյց տուած սիստեմանները ընդգրկում են միայն որոշ կարգի հասկացողութիւններ և երեսյթներ, իսկ միջազգային լեզուն պէտք է ընդգրկէ և հնարաւորութիւն գոյացնէ արտայայտելու, ինչպէս դրաւոր, նոյնպէս և բերանացի լեզով ամեն տեսակ մարդկային իդէաներ։

4) Գոյութիւն ունեցող արուեստական լեզուները։

Այդպիսի լեզուներ կարելի է անուանել երեքը. Վոլեապիւկ, Էսպերանտո և իդօ։ Սակայն

նրանցից վերջինը, իբրև թէ „կատարելագործած էսպերանտո է։ Նրա մասին ես մի քանի խօսք կ'ասեմ այս յօդուածի վերջը։

Առաջին տեղը պէտք է դնել ժամանակագրական կարգով Վոլեապիւկը։ Այդ լեզուի հեղինակն է գերմանացի պատոր Խօհան Մարտին Շլեյեր (1831—1912 թ.թ.), որ գոռոզ միտք Ելացաւ իւր մէջ ստեղծել համաօխարհային լեզուն, և 1878 թ. հանդէս ելաւ իւր համաշխարհու և 1880 թուականին նա լոյս ընծայեց և իւր քերականութիւնը այսպիսի գոռոզ լոզունգով։

«Մի մարդկութեանը և մի լեզու»։

«Մի գրութեանը և մի գիր»։

Արդէն այդ պահանջկոտութեան մէջ թագնուած էր նրա անյաջողութեան խմորը. ոչ մի ժամանակ ազգութիւնները չեն հրաժարուի իւրեանց մայրենի լեզուից. և եթէ մինչև անգամ բարար շարժումը, ջոկ ջոկ ազգութիւնները կը բարդարձ շարժումը, ջոկ ջոկ ազգութիւնները կը սկսէին ձեւափոխել «համաշխարհային» լեզուն իւրանց քմացը համաձայն և կ'առաջանար նոր Բարելոնական աշտարակաշխինութիւն։ Բացի այդ բելոնական աշտարակաշխինութիւն էր այնքան կավոլեապիւկի մէջ ամփոփուած էր այնքան կավոլեապիւկի մէջ ամփոփուած էր այնքան կամայական կամ անյաջող դարսողութիւններ, որ սպասել լուրջ և երկարատեւ յաջողութիւն այդ լեզուից անհնար էր։

Արդէն այբուբենի մէջ «ջոկ ազգութիւնների յարմարութեան համար» թոյլ էին արուած, այսպէս ասած, կրկնակի տառեր (թոյլ 6), «ըսնք նշանաւոր չափով դժուարացնում էին արտասահնութիւնը». Այսուհետեւ, եթէ լեզուի քերականութիւնը, իրաւի, դիւրին էր, նրա բառարանը դրա փոխարէն կամայական և դժուարին էր արտասահնութեան համար և դժուար ըմբռնելի յիշութեան համար, և մի քանի ժամանակակիցների վկայութիւնով ոչ ոք բացի հեղինակը չէր կարող խօսել այդ լեզով, եթէ չդիմէր շարունակ բառարանի օգնութեանը, իսկ Վոլեապիւկական հանդէսների խմբագիրները տեղեկատուն ձեռքերից չէին բաց թողնում. Բաւական է առաջ բերել երկու-երեք օրինակ, որ ապացուծնունդները:

Իւր բառարանին հիմք վեր առնելով անդամական լեզուն (զանազան նպատակներով) նայնչափ ծովուց նրա արմատները և ներկայացրեց իւր հետևողներին մի անհնարին բան: Օրինակ նոյն իսկ իւր լեզուի անունը «Volapük» և «Speak» («աշխարհ» և «խօսել») այդ պատճառով «Volapük» նշանակում է «համաշխարհային լեզու»: Կամ օրինակ Ամերիքայի անունը կազմելու համար նա դուրս գցեց այդ բառի

սկզբնական Ա տառը, երկրորդ հետևեալ տեղանկի մէջ ձևափոխեց Դ տառը, (որպէս թէ անարտասահնելի չինացիների համար և այդ պատճառով ի բաց առնելու) Ե-ի և երրորդը աւելացրեց վերջումը «օր», որը ընդունել էր նա ցամաքները ցոյց տալու համար առհասարակ: Այսպէս կազմուեցաւ Ամերիքայի անունը «Melop»: Այսպէս կազմեց աշխարհիս միւս մասերի նոյնպէս նա կազմեց աշխարհիս միւս մասերը. «Julop» (Եւրոպայ), «Silop» (Ասիա), «Fikop» (Աֆրիքայ), «Tarop» (Աւստրալիա): Նոյնպէս և ծոմուած են չճանաչելու չափ տէրութիւնների անունները. Ռուսիան դարձաւ «Lüsan», Ֆրանսիան «Flent», Աւստրիան—«Los-takin», Պորտուգալիան—«Bodugäo», բայց Գերմանիայի համար նա հակառակ վերել յիշած (ի պատիւ Զինաստանի) դուրս նետելու տեղը «Դ» տառը պահպանեց (երեխ ազգասիրական զգացմունքով), և ստացաւ «Germäo», ինչպէս և պահպանեց այդ տառը մի քանի ուրիշ խօսքերի մէջ... ահա ամիսների անունները կարգով յանուլ (Balul), Febul (Felul), Märul (Kilul), Apul (Folul), Mayul, Junul (Malul), Julul (Yelul), Gustul (Iolul), Setul (Zulul), Otul (Balsul) Novul, Dekul.

Ի՞նչ կայ այստեղ ընդհանուր Եւրոպական ազգերի մէջ գոյութիւն ունեցող ամիսների անունների հետ: Եւ ինչու արդեօք նրանց մեծա-

մասնութիւնը ունի երկ-երկու անուն, իսկ  
մացածները անպատճած են և միայն մի անուն  
են կրում:

Իսկ որպէս զի աւելի հաստատուի վօլեա-  
պիւկի այդ խորթութիւնը, գոյութիւն ունեցող;  
Եւրոպական լեզուներից և սրանից ծագող չա-  
փազանց գժուարութիւնը այդ լեզուի բաւովիրքը  
սովորելու համար, այստեղ առաջ կը բերեմ  
«Հայր մեր» աղօթքի սկիզբ:

«Fax obsik, kel binom in sul, sanosöb  
olik mem, kömosöd olike regam, binosöd olik  
vil as po sil e po tal. Yede liki bodi obsik,  
givol obse tudel e ofogivol obse sins obsik as  
fogivobs bligese obsik» *և այլն:*

ինչպէս ընթերցողը կարող է տեսնել, ոչ  
մի բառ չկայ, որ նման լինի, որքան և իցէ, գո-  
յութիւն ունեցող հնդկակեւրոպական յեզունե-

Սակայն այն ժամանակները միջազգային  
լեզուի կարիքը այնքան էր արդէն հասունացել,  
որ մինչև իսկ այդ ծայրայեղ անյաջող լեզուն  
գրաւեց դէպի իրան բազմաթիւ հետևողներ, ա-  
ռաւել ևս Գերմանիայում։ Շատ լրագիրներ գե-  
տեղում էին. համակրական յօդուածներ և այդ  
լեզով գրած վարդութիւններ։ Պարիզում, Բօր-  
դոյում, Վեննայում, Մալրիդում և շատ ուրիշ  
եւրոպական քաղաքներում, Ամերիքայում վօ-

լեապիւկը գասաւանդվում էր զանազան ուսումնարանների մէջ (մինչև անգամ համալսարաններում)։ 1888 թ. լոյս էր տեսնում այդ լեզով մինչև տասը ամսադիր և նրանցից մէկը Զինաստանում և մէկը Բեյրուտում։ Իտալիայում իշխանութիւնը հրամայեց բոլոր պօստ-հեռագրութեան ծառայողներին սովորել Վոլեապիւկը 1884, 1885 և 1889 թուականներին կազմակերպութիւն միջազգային վոլեապիւկիստների կօնդրէսներ... Սակայն... ահա այստեղ պարզուեցան այդ լեզուի բոլոր պակասութիւնները—քաղցրահնչութեան բացակայութիւնը և ծայրայեղինքնազատութիւնը բառերի արմատները կազմելիս։ Բաւական է ասել, որ ինչպէս առաջ էլ ես յիշեցի, համարեա, ինչպէս երևաց, անհնարին է արձակ խօսակցութիւնը, բայց չէ որ դա առաջին նպատակն է «միջազգային լեզու» կազմելու համար։ Բնականաբար շատ հետեղողներ սկսեցին պահանջել կարեոր փոփոխութիւններ բառարանի գորականութեան մէջ։ Դրա համար հիմնուեցաւ Պարիզում ակադեմիա, ոոյն իսկ հեղինակի կառաւունքները լեզուի վերայ սահմանափակուելիրաւունքները լեզուի վերայ սահմանափակուեցին, որովհետեւ նա ոչ մի փոփոխութիւն չէր ցին, որովհետեւ նա ոչ մի փոփոխութիւն չէր ցանկանում թոյլ տալ և բողոքեց իւր մանկիկի ցանկանում թոյլ տալ և բողոքեց իւր մանկիկի դէմ մտադրուած փորձի առթիւ։ Առաջացաւ հերծուած և գործը արագաքայլ և անդառնալի կերպով գնաց դէպի լիովին քայքայումը։

Եւ այդ իսկ ժամանակ ասպարէզ դուրս եւ կաւ դը իսպերանտօ իւր «միջազգային» լեզուի հետո: Եւ առաջին իսկ ջերմ կուսակիցներ նա գտաւ նոյն վոլեապիւկիստների շրջանում, նրանք արդէն յուսահատուած էին պաստոր Շլեյերի «համաշխարհային լեզուի» վերաբերութեամբ: Նրանցից առաջին տեղը պէտք է տալ ժուրնալիստ Լեօպոլդ Էյնշտեյնին, որ ամենաջերմեռանդ անդամն էր Նիւրենբերգի Վոլեապիւկական կուրսի և գործունեայ քարոզիչ Վոլեապիւկի Գերմանիայում: 1888 թ. օգոստոսին նա ստացաւ դը իսպերանտօի առաջին գրքերը, նրա միջազգային լեզուի մասին և, իմաստասիրելով նրանց մի քանի օրուայ մէջ, վճռականապէս դէն գցեց Վոլեապիւկը, որի թոյլ կողմերը աւելի լաւ էր ճանաչում, քան թէ ով իցէ և դարձաւ ջերմ մըշտական բարեացակամ նոր լեզուի: «Վերջապէս, գրում է նա մի քանի ժամանակ յետոյ լեզուի հեղինակին. միջազգային լեզուի հարցը լուծուած է կանոնաւորապէս և անպայման: Վոլեապիւկի համար աշխատելիս, ես ասում էի ինձ ու ինձ, թէ այդ լեզուի կէսը (քերականութիւնը) լաւ է, բայց միւս կէսը (բառարանը) անպէտք է, սակայն ես մտածում էի, թէ ոչ ինչ չէ կարող կատարեալ իինել և թէ անխուսափելի է, որ մի մասը միւսից վատ լինի: Բայց նոր լեզուի մէջ ինչպէս առաջին նոյնպէս և երկրորդ մասերը

մշակուած են կատարելապէս և ես հաստատ հա-  
մոզմունքով բացագանչում եմ. միջազգային լե-  
զուի հարցը լու ծուած է վերջնականապէս. որով-  
հետեւ ոչ մի ժամանակ հնարաւոր չի լինի ստեղ-  
ծել աւելի պարզ քերականութիւն, քան որ ունի  
այդ լեզուն և ոչ մի ժամանակ միջազգային լե-  
զուի բառարան կարելի չէ կազմել այլ հիմունք-  
ների վերայ, քան թէ այդ բառարանը. և դրա-  
նից յետոյ լ. Էնշտէյնը լոյս ընծայեց շարադրու-  
թիւն գերմաներէն լեզով. «La lingvo interna-  
cia», որպէս ամենակատարեալ լուծունն միջազ-  
գային լեզուի հարցին վերաբերեալ. Այդ շարա-  
դրութիւնը մեծ աղմուկ բարձրացը կօլեապիւ-  
կիսաներու շրջանում, հասցը նրան շատ վի-  
րաւորական ըուպէներ, բայց այդ չկարողացաւ  
փոխել նրա վճիռը. Այդ գեռ քիչ էր, նրա վըճ-  
ուին հետևեց շատ շուտով նիւրենքերգի կօլեա-  
պիւկական ժողովարանի հախագահ Խ. Շմիդտը,  
այսկական ամբողջ ժողովարանը ձևա-  
խուկ այնուհետեւ և ամբողջ ժողովարանը ձևա-  
խուկ առաջին էսպերանտական ընկերու-  
թեան. Կօլեապիւկի ուղղակի սրտին էր հաս-  
թեան. Վօլեապիւկի ուղղակի մոռացու-  
թեանը արժանացաւ. Նրա փոխարէն սկսուեց.  
սկիզբ դանդաղ, իսկ յետոյ աւելի և աւելի  
բարձրապէս և ինտենսիւ առաջ գնաց դը էսպե-  
րապապէս և ինտենսիւ առաջ գնաց դը էսպե-

այդ կեղծ անունից ստացաւ իւր բարեհնչիւն և գեղեցիկ անունը:

III.

ԷՍՊԵՐԱՆՏՈՅԻ ԾԱԳՈՒՄԸ, ՆՐԱ ՀԵՂԻՆԱԿՐ.

Էսպերանտօն լոյս տեսնելուց յետոյ միջազգային լեզուի հարցը վճռուեցաւ կտրականապէս և վերջնականապէս: Վերև առաջ բերած Լէոպոլտ Էնշաեյնի խօսքերը, որ նա ասել էր դեռ 1888թ. մարդարէական էին: Եւ նրանք չէին կարող այլ նշանակութիւն ունենալ այն հիմունքներով, որոնք նրանց մէջ առաջ էին բերուած. ոչ ինչ աւելի լաւը կարելի է հնարել և եթէ այնուհետև երեացին էսպերանտօի մէջ պակասութիւններ և սխալներ, նրանք հետզհետէ անհետացան՝ դորձնականապէս նրան դորձադրելուց յետոյ, առանց խախտելու որ և է կերպ լեզուի հիմունքները, նրա «Fundamento»-ն: Այդ բոլորը կը լինի հետևեալ գլուխների բովանդակութիւնը, իսկ գեռ այժմս ես ցանկանում եմ կանգնել էսպերանտօյի ծագման վերայ և քանի մի խօսք ասել նրա հեղինակի մասին:

«Միջազգային լեզուի» հեղինակը—մեր համարկրացի, բժշկապետ աշքաբոյժ Լիւգովիկ Մարկովիչ Զամենհոֆն է, նա իւր ամբողջ կեանքը իւր ամենալաւ տարիները և ոյժը նուիրեց իւր

սուրբ նպատակին—ստեղծել միջազգային լեզու, որը անհետացնէր ազգութիւնների միջից փոխադարձ մէկզմէկու անհասկանալը, որ կանգնած է պատմա նրանց մէջ, որպէս անյաղթելի չինական այժմս Արանց մէջ, որպէս անյաղթելի չինական պատմում իւր պատ: Այս նա ինքը ինչպէս է պատմում իւր պատ: Այս նա ինքը ինչպէս է պատմում իւր պատ: Այս նա ինքը ինչպէս մասին, մի նամակի մէջ լեզուն կազմակերպելու մասին, մի նամակի մէջ լեզուն էսպերանտիստներից մէկին, Ն. Բորովկոյին էսպերանտիստներից մէկին, Ն. Բորովկոյին ուղղած:

«Ես ծնել եմ 3—15 դեկտեմբերի 1859թ. Բէլոստօկում Գրոդնեան նահանգում: Այդ իմ ծննդեան և երեխայական տարիներիս վայրը ուղղութիւն տուեց իմ ամբողջ պատգայ կեանքին: Բելոստօկում բնակչութիւնը կազմուած է չորս բնական տարրերից՝ ուռւական, լեհական, գերգանական և հրեական: Այդ տարրերից իւրաքանչմանական և հրեական: Այդ տարրերից իւր լեզում է ջոկ լեզուվ և թշնամաքար է չիւրը խօսում է ջոկ լեզուվ և թշնամաքար է վերաբերում դէպի միւս տարրերը: Այդ քաղաքի մէջ աւելի, քան թէ ուր և իցէ զգայուն ընաբերի մէջ աւելի, իսկ գեռ այժմս ես ցանկանում եմ լորութիւնը զգում է այլալեզուութեան ծանր լորութիւնը զիւում և ամեն մի քայլափոխում հաղթբախտութիւնը և ամեն մի քայլափոխում հաղթբախտութիւնը մոզւում է, որ լեզուների զանազանութիւնը միակ մոզւում է, որ լեզուների զանազանութիւնը միակ տում է մարդկային ընտանիքը և բաժանում է տում է մարդկային ընտանիքը և բաժանում է տում է մարդկային ընտանիքը և բաժանում է ինձ նամական մասերի: Ինձ կը թում էին նրանց թշնամական մասերի: Ինձ կը թում էին ներշնչում իդէալական ուղղութիւնով, ինձ ներշնչում էին, էին, թէ մարդիկ բոլորը եղբայրակիցներ են, էին, թէ մարդիկ բոլորը եղբայրակիցներ են, այն ինչ փողոցի մէջ, գաւթում ամեն մի

Քայլափոխի ես համոզւում էի, որ մարդիկ չկան, այլ կան միայն ռուսներ, լեհներ, գերմանացիներ, հրեաներ և այլն։ Այդ բոլորը սաստիկ տանջում էր իմ երեխայական հոգին, թէպէտ, գուցէ, շատերը ծաղրեն այդ երեխայական «համաշխարհային վիշտը»։ Եւ որովհետև ինձ թւում էր այն ժամանակ, թէ հասակաւորները մի ամենակառող ոյժի տէր են, ես շարունակ կրկնում էի ինձ ու ինձ, թէ երբ ես հասակաւոր գառնամ, — անպատճառ կը ոչնչացնեմ այդ չարիքը։

«Հետզհետէ ես համոզուեցայ սակայն, որ ոչինչ չէ կատարւում այնպէս հեշտ, ինչպէս այդ թւում է երեխային։ Մէկը միւսի ետիկց ես դէն էի շպրտում զանազան երեխայական ցնորդներս և միայն իմ միակ մտորս՝ մի ընդհանուր մարդկային լեզուի ցնորդը ես չէի կարող դէն գցել։ Անզիտակցաբար ես ձգւում էի դէպի նրան, թէ պէտ հասկանալի է, առանց որ և է որոշ ծրագրի։ Ես չեմ յիշում երբ, բայց այնուամենայնիւ, բաւականին վաղ, իմ մէջ հասունացաւ այն զգացմունքը, թէ այդպիսի միակ լեզու կարող է լինել միմիայն չեզօք լեզուն, որը չէ պատկանում այժմս գոյութիւն ունեցող ոչ մի ազգային լեզուի։ Երբ ես Բելոստոկի բէալտական ուսումնարանից տեղափոխուեցայ վարշաւայի կլասիքական երկրորդ գիմնազիան, ես առժամանակ յարշտակուեցայ հին դասական (անտիք) լեզունե-

ըով, ես երազում էի, թէ ինչպէս ապագայում ես կը չըջեմ ամբողջ աշխարհը և վառ քարոզներով կը համոզեմ մարդկանց։ կենդանացնելայդ լեզուներից մէկը ընդհանուրի գործածութեան համար։ Յետագայում, ես չեմ յիշում արդէն, թէ ինչպէս, ես հասայ հաստատ համոզդէն, թէ հինչպէս, մի հասակաւորները մի ամենակառող ոյժի տէր երազել նոր արուեստական լեզուի մասին։

«Այն ժամանակ ես շատ անզամ սկսում էի որ և է մի փորձ, հնարում էի արուեստական հոլովմունքներ և խոնարհմունքներ և այլն։ Սակայն մարդկային լեզուն իւր, ինչպէս ինձ թըւում էր, անվերջ կուտակուած քերականական ձևերով, իւր հարիւր հազարաւոր բառերով, որոնց գալիսուրեցնում էին ինձ հաստափոր բառացով զալիսուրեցնում էր ինձ այնպիսի մի արանները, ներկայանում էր ինձ այնպիսի մի արանները, և առելի մեքենայ, որ ես շատ բուեստական և առելի մեքենայ, որ ես անզամ ասում էի ինձ։ «Հեռու, ցնորդներ, այդ գործը մարդկային ոյժից վեր է»։ Եւ այնուամենայնիւ ես կրկն և կրկն վերադառնում էի դէպի իմ երազը։

«Գերմանական և ֆրանսիական լեզուները ես սովորել էի երեխայական հասակումս\*), երբ

\*) Նրա հայրը այդ լեզուների ուսուցիչ էր, սկիզբը Բելոստոկում, իսկ յետոյ Վարշաւայի արքունական բէալտական ուսումնաբանում։

գեռ ընդունակ չէի համեմատութիւններ և եղակացութիւններ անելու։ Բայց երբ 5-րդ դաստունը դանուելիս, զիմնազիայում, ես սկսեցի անգլիերէն սովորել, անգլիական քերականութեան պարզութիւնը հիացըեց ինձ, շնորհիւ այն համեստանքի, որ ես մէկէն ի մէկ դարձայ նըրատն լատինական և յունական քերականութիւններից։ Ես նկատեցի այն ժամանակը, որ քերականական ձևերի հարստութիւնը միմիայն կոյր պատահականութիւն է և ոչ թէ լեզուի համար մի անհրաժեշտութիւն։ Այդ ազդեցութեան տակ ես սկսեցի պարել լեզուի մէջ և ջոկել անհրաժեշտ ձևեր և նկատեցի շուտով, որ քերականութիւնը հետզհետէ հալչում է իմ ձեռքի տակ, այնպէս որ ես ստացայ մի ամենափոքրիկ քերականութիւն, որը առանց լեզուին վնասելու միայն մի քանի երես տեղ էր բռնում։ Այն ժամանակ ես աւելի լուրջ կպայ իմ ցնորքին։ Սակայն ահաւոր բառարանները տանջում էին ինձ։

«Մի անգամ, երբ ես 6-րդ թէ 7-րդ դասաւորներումն էի, ես պատահաբար ուշադրութիւն դարձրի բացարանական (կացարան՝ շվեյցար-սկայ) տախտակի գրուածքի վերայ, որ ես շատ անգամ առաջ էլ էի տեսել և յետոյ կանդիտերատուն, կանդիտերանոց („կոնդիտերская“) ցուցատախտակի վերայ: Այդ «ական» վերջաւորութիւնը հետաքրքրեց ինձ և ցոյց տուեց որ սուժ-

ֆիկոները (յետադաս մասնիկները) միջոց են  
տալիս մի բարից կազմել ուրիշներ, որոնց պէտք  
չի լինիր սովորել առանձին-առանձին։ Այդ միտ-  
քը յափշտակեց ինձ ամբողջովին և ես զգացի  
յանկարծ ամուր հող իմ ոտքերիս տակը։ Սար-  
սափելի, ահալի բառարանների վերայ լոյսի ճա-  
ռագայթ ընկաւ և նրանք սկսեցին հապճէպ փոք-  
րանալ իմ տեսողութեան առաջ։  
«Խնդիրը լուծուած է», ասացի ես այն ժա-  
մանակ։ Ես վեր առայ սուժֆիկոների գաղափա-  
րը և սկսեցի մեծ ջանքով աշխատել այդ ուղ-  
ղութիւնով։ Ես հասկացայ, թէ ինչ մեծ նշանա-  
կութիւն կարող է ունենալ լոգիկաբար ստեղ-  
ծած լեզուի համար այդ ոյժի բոլորակողմանի  
օգուտը, որ բնական լեզուների մէջ գործում է  
միայն մասնաւորապէս, կոյլ աչքով, անկանոն  
կերպով և կրծատ։ Ես սկսեցի համեմատել բառե-  
րը, պարել նրանց մէջ մշտական, որոշ յարաբե-  
րութիւններ, և ամեն օր գուրս էի գցում բա-  
ռարանից որ և է մի շարք բառեր, փոխանակե-  
լով նրան մի սուժֆիկուով, որ նշանակում էր  
որոշ յարաբերութիւն։ Ես նկատեցի այն ժամա-  
նակ իսկ, որ բազմաթիւ արմատական բառեր  
(օրինակ, մայր, նեղ, գանակ և այլք) կարող են  
նոյնպէս հեշտութիւնով վերափոխուել ածանցա-  
կանների և ուրեմն նոյնպէս կը անհետանան բա-  
ռարանից։ Լեզուի բոլոր մեքենան հիմա իմ աշ-

քի առաջն էր, որպէս իմ բոլի վերայ գրուած, և ես սկսեցի պարապել կանոնաւոր կերպով, ոիւ ըալի և յոյոով: Դրանից մի քիչ յետոյ ես ունէի արդէն իմ ձեռագիր քերականութիւնը և մի փոքրիկ բառարան...

„1878 թ. լեզուն արդէն քիչ թէ շատ պատրաստ էր, թէպէտ այն ժամանակւայ «lingue universalia» և այժմեան իսպերանաօի մէջ դեռ մեծ զանազանութիւն կար: Ես յայտնեցի դրա մասին իմ ընկերներին, (ես այն ժամանակ գիմնազիայի 8-րդ դասարանումն էի): Նրանցից շատերը յափշտակուեցան՝ ինչպէս դաղափարով, ոյոյնպէս և նրա չափազանց հեշտութիւնով ու սկսեցին սովորել լեզուն. 1878 թ. դեկտեմբերի 5-ին մենք հանդիսաւոր կերպով տօնեցինք լեզուի մկրտութիւնը...

«Այդպէս վերջացաւ լեզուի առաջին շրջանը: Ես այն ժամանակ դեռ շատ ջաճիլ էի, որ հրապարակ դուրս գայի իմ աշխատաւթիւնով և վրձնում ուշադրութիւնով փորձեմ նրան և մշակեմ գործնականական դեկտեմբերի 5-ի տօնախմբութիւնից կէս տարի յետոյ մենք աւարտեցինք գիմնազիական դասընթացը և ցրւեցինք: Նրա մասին պատմել ուրիշներին, բայց հանդիպելով հասակաւոր մարդկանց ծաղրանքին, շտա-

պեցին նրանից ձեռք վիր առնել, եւ ևս մնացի մէն մէնակ... Նախագուշակելով ապագայում միայն ծաղրանքներ և հալածանքներ, ես վճռեմիայն ծաղրանքներ և հալածանքներ, ես վճռեցի թագցնել ամենքից իմ աշխատութիւնը: Հինգ կէս տարի համալսարանում անցկացրած միուն կէս տարի համալսարանում անցկացրած միուն կէս տարի համալսարանում չխօսեցի իմ ջոցին ես երբէք և ոչ ոքի հետ չխօսեցի իմ ջոցին մասին: Այդ ժամանակամիջոցը ինձ հագործի մասին: Գաղանիքը տանջում էր մար շատ ծանր էր: Գաղանիքը իմ ժաքենած: Հարկադրուած թագցնել բոլորից իմ ժաքենած: Հարկադրուած թագցնել բոլորից իմ ժաքենած: Համարես և ծրագիրներս, ես համարեա ոչ մի տեղ ուրս և ծրագիրներս, ես համարեա ոչ մի տեղ չէի գնում, ոչ ինչ գործի մէջ չէի մասնակցում չէի գնում, ոչ ինչ գործի մէջ չէի մասնակցում կեանքիս ամենալաւ տարիները—ուսանողութեան ատարիները—ինձ համար շատ տխուր անց թեան ատարիները—ինձ համար շատ տխուր անց կացան: Երբեմն ես փորձում էի զուարձանալ հասարակական շրջանում, սակայն ես ինձ զգում միուն օտար և հեռանում էի, միուն միջոց առ միուն օտար և հեռանում էի, միուն միջոց առ միուն օտար և հեռանում էի, միուն մշակում էի... և է ստանաւոր այն լեզուվ, որ ես մշակում էի,

„Վեց տարի շարունակ ես աշխատում էի, կատարելագործելով և փորձելով լեզուն... և ես բաւականին գործ ունէի, թէպէտ դեռ 1878 թ. բաւականին գործ ունէի, թէպէտ դեռ բոլորովին ինձ թւում էր, թէ արդէն լեզուն բոլորովին ինձ պատրաստ է: Ես շատ էի թարգմանում իմ լեզուի գրում էի այդ լեզուվ ինքնուրոյն յօդուածով, գրում էի այդ լեզուվ ինքնուրոյն յօդուածով, ներ և այդ ընդարձակ փորձերը ցոյց տուին ինձ, ինձ լիովին պատրաստ թէ այն ինչ թւում էր ինձ լիովին պատրաստ տեօրետիքապէս, դեռ պատրաստ չէ գործնական».

կողմից։ Շատ բան ես պէտք է կտրատէի, գուխարինէի, ուղղէի և արմատապէս գոփոխէի։ Բառերը և նրանց ձևերը, սկզբունքները և պահանջները ընդհարում էին և իրար արգելք էին հանդիսանում, այն ինչ կանոնով և փոքր նախագասութիւնների մէջ նրանք բոլորը թւում էին ինձ բոլորովին պիտանի և լաւ... 1878 թ. ինձ թրում էր, թէ բաւարար է քերականութիւնը և բառարանի և լեզուի կոշտութիւնը և գեղեցկութեան պակասութիւնը ես վերագրում էի միայն նրան, որ նրանց բաւականաչափ չեմ տիրապետում։ Սակայն գործնականութիւնը աւելի և աւելի համոզում էր ինձ, որ լեզուն կարօտ է մի ներմուծելի տարրի, որը պարզեցում է լեզուին կեանք և բոլորովին որոշ կազմակերպուած «ողի»...»

«Ես սկսեցի այն ժամանակ խուսափել բառացի թարգմանութիւններից այս կամ այն լեզուից և աշխատում էի մտածել ուղղակի չեզօք լեզուվ։ Ահա այստեղ ես նկատեցի, որ լեզուն իմ ձեռքսւմ այլ ևս անհիմն ստւեր չէ ներկայանում այս կամ այն քնական լեզուի և ստանում է իւր սեփական «օպին», սեփական որոշ և պարզ կերպարանքը, անկախ ուրիշ ազգեցութիւններից։ Բառը հետևում էր բառին, սահում էր ճըկուն, գեղեցիկ և աղատ կերպով, որպէս կենդանի մայրենի լեզու...»

«Ես աւարտեցի համալսարանը և սկսեցի իմ  
բժշկական պրակտիքան։ Այստեղ արդէն ես սկը-  
սեցի մտածել հրապարակ դուրս գալ իմ աշխա-  
տութեանով, ես պատրաստեցի իմ առաջին բոո-  
շիրի ձեռագիրը (Նրա վերնազիրը ցոյց է տուած  
այս յօդուածի սկզբում) և սկսեցի հրատարակիչ  
որոնել։ Այստեղ ես առաջին անգամ հանդիպեցի  
կեանքի դառը իրականութեանը, դրամական հար-  
ցին, որի հետ պէտք է մաքառէի և այժմս էլ—  
մաքառում եմ։ Երկու տարի ես իզուր հրատա-  
րակիչ էի որոնում և երբ գտայ մէկին—նա կէս  
տարի իմ ձեռագիրը պատրաստում էր հրատա-  
րակելու և վերջը հրաժարուեց։ Եւ միայն երկար  
քաշքառելուց յետոյ ինձ յաջողեցաւ անձամբ  
հրատարակել իմ առաջին բոոշիրը 1887 թ. յու-  
լիսին։ Ես այն ժամանակ շատ էի յուզում։ Ես  
զգում էի, որ կանգնած եմ Ռուբիկոնի առաջ և  
թէ այն օրից սկսած, երբ լոյս տեսնի իմ բոո-  
շիրը, ես այլ ևս հնար չեմ ունենալ վերադար-  
շիրը, ես այլ ևս հնար չեմ ունենալ վերադար-  
շիրը ձի ճանապարհ գտնել։ Ես գիտէի ինչ վիճակ է  
ձի ճանապարհ գտնել։ Ես գիտէի ինչ վիճակ է  
մի բժշկի, որ ժողովրդից կախումն ու-  
նի, եթէ այդ ժողովուրդը տեսնէ, որ նա մի  
ցնորսամիտ մարդ է, որ զբաղուած է «Կողմանակի  
գործերով»։ Ես զգում էի, որ խաղ եմ անում  
ապագայի անձնական և ընտանեկան վիճակի  
հանգստութեան հետ։ Բայց ես չէի կարող հրա-  
ժարուել իդէայից, որ տիրապետել էր իմ

ամբողջ գոյութիւնը և... Ռուբիկոնը անցկացայ\*)...

Որքան անկեղծ և որքան կարճառօտ է այս ինքնակենսազրութիւնը։ Ի՞նչպիսի համեստութիւնով և ինքնազոհութիւնով է նա փայլում և ինչպէս գեղեցիկ է նա պատկերացնում բոլոր էսպերանտիստներին թանկ և նրանց ջերմագին սիրելի և յարգելի Մաէստրօի անձնաւորութիւնը։ Ես կարող էի աւելացնել լ. Զամենհօվի կեանքից շատ ուրիշ փաստեր, ես կարող էի պատմել, թէ որքան երկար և ծանր կերպով նա մաքառեցաւ խեղճութեան դէմ, ինչպէս էր տանջւում շրջապատզների ծաղրանքից, թէ ինչպէս էր փախչում նրանից բժշկական պրաքտիքան և այն պատճառով միայն, որ նա չէր կարող հրաժարուել իւր բոլոր կեանքի նպատակից, — նոյն իւրան ծաղրող մարդկութեան օգտի համար այնքան նշանաւոր միջազգային լեզուն ստեղծելուց։ Սակայն ինքը Զամենհօվը, զարմանալի պարկեցութիւնով, չէ սիրում, երբ խօսում են դորամասին և այդ պատճառով ես չեմ շոշափելու փաստեր նրա անձնական կեանքից։

\*) Թարգմանած է էսպերանտական լեզուից „Deveno kaj historio de Esperanto“ Պրագայում լոյս ընձանած „Časopys Českých Esperantistů“-ից։

IV.

ԷՍՊԵՐԱՆՏՕԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԻ:

Ես արդէն աւելի վաղ եմ ասել, թէ էսպերանտօին առաջին շերմ հետևողներն են եղել նախկին վօլեապիւկիստները՝ լ. Էյնշտեյն, Խ. Շմիդտ և ուրիշները։ Սակայն պէտք է նկատել, Շմիդտ և ամենամեծ հոսանքը՝ նրա որ էսպերանտիզմի ամենամեծ եղել է մեզ մօտ, կեանքի առաջին տարիներում եղել է մէջ գանւում էին Ռուսիայում։ Միւս երկրների մէջ գանւում էին միայն զատ-զատ անձնաւորութիւններ, այն ինչ Ռուսիայում հետևողների թիւը մեծ էր։

Ամենայայտնի և տմենահին էսպերանտիստներից մէկը, լեհացի բժշկապետ Կազիմիր Բեյնը նրա գրականական կեղծ անունն է Կաբէ) աշնան էսպերանտական կոնգրեսում, իւր զեռաջին էսպերանտական կոնգրեսում, իւր զեռաջման մէջ, Boulogne sur mer (Ֆրանսիակուցման մէջ, ասում է գրա մասին հետեւյում) 1905 թ., ասում է գրա մասին հետեւյալը։

«Էսպերանտօն առաջին տարիները, համարեա բացառապէս, տարածւում էր Ռուսիայում։ Հետևողների, քարոզիչների և հեղինակների մեջ հետևող գործութիւնը, համարեա, բոլորը, ուսուներ ծամասնութիւնը, համարեա, բոլորը, զօսունիկով, էին։ Կոֆման, Աերնէտ, Զինովիվ, Պուտնիկով, էին։ Կովկաս, Աերնէտ, Զինովիվ, Պուտնիկով, գրում Օստրովսկիյ և շատ ուրիշ\*） հեղինակներ գրում

\*.) Վ., Մայնով, Ե. Փօն-Վալ, Ն. Բօրովիկո, Կուշ-ներ, Լոյկո, Բուրենկով, Կազի-Գերեյ, Աւելով, Պուշկինից։

Էին և գործում այդ շրջանում, որին հարկաւոր է անուանել ուսական։ Ուրիշ երկրներում մենք կը գտնենք նոյնպէս այնպիսի անուններ, որոնց չէ կարելի մոռանալ. Վասնեվսկի և Գրատեր Գերմանիայում, Էյնշտեյն և Տրօմպելին և Լենգենդեա Շւեդիայում։ Բայց նրանց գործունամար ընդհանրապէս, այնուամենայնիւ չէր կարող ուշադրութիւն գրաւել դէպի մեր գաղափառիստի այժմեան արագաքայլ պրօգրէսը տեսնող քայլերի մասին առաջին տարիները, ճիշտ չեն Ձին վայրկեանի մրցողների ամենանշանաւոր ծառ «Lingvo internacia» ամսագրի խմբազրութեանը։ «Մենք ապրում էինք, թէպէտ ամեն ինչ պատճեն էր մեզ, թէպէտ ամեն օր մենք պէտք է յաղթէինք նոր և նոր արգելքների, թէպէտ արջապատղները շարունակ նախագուշակում էին մեր մահը և մինչև անգամ աշխատում էին մահը արագացնել։ Մենք ապրում էինք, չնայելով թշնամիների յարձակմունքներին և մեզ հա-

\*) Դամբրովսկի, Եանովսկի, Բլիւմինստար, Եան-Գիւնտեր, Բժուստովսկի, Զակժելսկի և այլք։

լածողներին, չնայելով խանդին, նախանձին, ծաղ-րանքներին և վիրաւորանքներին։ Մենք ապրում էինք և ամեն մի ջանք՝ վերջ դնել մեր կեան-էինք և ամեն մի ջանք՝ վերջ դնել մեր կեան-էինք և ամեն մի ջանք՝ վերջ դնել մեր լի-գեղեցիկ և զարմանալի չէ...» Ուրեմն մեր լի-գուի պատմութեան ուսուական շրջանը պէտք է շատ նշանաւոր համարել։ Նա դժուարին պատե-շատ նշանաւոր համարել։ Նա դժուարին պատե-րազմի ժամանակամիջոց էր առաջին պիօներնե-րի կողմից մարդկային անտարելքութեան և կար-ծիքութեան դէմ։ Եւ լեզուն մեծ շահ ունեցաւ այն հանգամանքից, որ առաջին հեղինակները ալաւեաններ էին։ Սլաւեանական սինտաքսիզի պատմանների լոգիկամ կազմը սլաւեանա-դասութիւնների լոգիկամ կազմը սլաւեանա-կան լեզուներում, նրանց բացառապէս ազատ և բառական կարգաւորութիւնը անզիտակ-ընական բառական կարգաւորութիւնը անզիտակ-ընական բառական կազմը է էսպերանտօն սլաւեանա-ցարար իւրանացըրել է էսպերանտօն սլաւեանա-կան լեզուներից և ոչ սլաւեան հեղինակների կան լեզուներից։

Համար նմանուելու պատճառ դառցել\*):  
Նախագծած ծրագրով դ-ր Զամենհօֆը ուղղ-բումը հրատարակում էր նոր էսպերանտիստների ցուցակը։ Ահա ինչպէս է բաժանուում ջոկ ցուցակը։ Ահա ինչպէս է բաժանուում ջոկ ցուցակը։

\*) Historieto de Esperanto, de d-ro Anpreo Fisser  
1811 թ.

Բուսիան (Լեհաստանի հետ) — 919, Գերմանիան — 30, Աւստրիան — 22, Անգլիան — 9, Ֆրանսիան — 6, Շվեյցարիան 4, Հ.-Ամեր. Միացեալ Նապանդները — 4, Տաճկաստանը — 2, Իտալիան, Իպանիան, Բումբինիան և Զինաստանը մէկ-մէկ<sup>\*)</sup>):

Եւ տասը տարի յետոյ, նայելով նոյն ցունոր միացողների 336-ի թւում, 169 անձ այնուշանայիւ ոռուներ էին, (հաշուելով այդտեղ Լեհաստանը և Ֆինլանդիան):

Այդ առաջին շրջանի ընթացքում ի լոյս էր ընծայուած շատ ձեռնարկներ և բառարաններ զանազան ազգութիւնների համար, Բացի այդ հրատարակուեցան մի շարք թարգմանութիւններ զանազան ազգային լեզուներից և, որ աւելի նշանաւոր է, օրիգինալ (ինքնուրոյն էսպերանտերէն) մի քանի շարադրութիւններ: Եւ այս վերջինիս կողմից առաջին տեղը բռնեցին ոռուսկինակները: Այսպէս 1888 թ. Անտ. Գրաբովչոն-Վալլը — «Կնյաжնա Մэри» — Լեհմոնտովից, 1891 թ. Մայկովը — «Վозрожденный Манфредъ» Կ. Р. 1894 թ. Վ. Դեւեասինինը (Վիլնյուս) Լեհմոնտովի «Դемонъ» պօէման և Պուշ-

<sup>\*)</sup> „La Kroniko“ ամսագիրը, 1911 թ. Լեյցիդ,

№ 4, էր. 57.

թէ որպէս «ոռուս արջի», այլ որպէս թանկառին  
թէ որպէս «ոռուս արջի», այլ որպէս թանկառին  
համամիա ընկերի վերայ։ Եւ ես կուզէի ասել  
էսպերանտօն սովորող իմ ընկերներին, աւելաց-  
էսպերանտօն սովորող իմ ընկերներին, աւելաց-  
նում է պ. Սարօկինը իւր մասնաւոր նամակի  
մէջ, եթէ դուք տեսնէիք և լսէիք այն ամենը,  
ինչ ես տեսայ և լսեցի արտասահմանում, ձեր  
ոգեսրութիւնը կը տասնապատկռէր,»

Բայց ահա մի ուրիշ շատ հետաքրքիր օրի-  
նակ, 1910 թ. մի խումբ անգլիացիներ բերն-  
ելել քաղաքում մտադրուեցին այցելել գերմա-

Նիս: Նրանք բոլորը կանխապէս սկսեցին գերմաններէն սովորել, մի և նոյն ժամանակ նրանցից մէկը մինչև անգամ հրաւիրեց ուսուցչի և գեղեցկապէս, իւրաինացրեց իրան հարկաւոր խօսակցութեան ձեր: Բայց նրանց մէջ կար մի ոմն պ. Մերկլիւ, որ զիտէր էսպերանտօն: Նա առաջուց յայտնեց, որ այդ «արուեստական» լեզուն բոլորովին բաւական է նրան և թէ ոչ մի այլ լեզու նա մտադիր չէ սովորելու, Միւս ընկերակիցները ուրախ ուրախ ծաղրում էին նրան և մտքերու մէջ նրան յիմար էին անուանում... Իսկ գործը վերջացաւ նրանով, որ Գերմանիա գալուց մի շաբաթ յետոյ ամբողջ խումբը քարշ էր գալիս պ. Մերկլիւի ետեից և նա նկարագրում էր նրանց այցելած տեղերի երկելիքները, թարգմանելով անգլիերէն տեղական ընակիցների էսպերանտական նկարագրութիւնը... Իսկ «գերմաններէն լեզուի զիտակը» հիասթափուած ասում էր. «Ան անիծուած մի երկիրը: Ոչ ոք չէ հասկանում իւր սեփական լեզուն:» Եւ վերադառնալով Անգլիա, նրանք սկսեցին տաք տաք սովորել էսպերանտօն, փորձով համոզուելուց յետոյ նրա ահազին օդտակարութեան մասին:

Շատ մօտաւոր անցեալից կարող եմ ցոյց  
տալ կեղծ անունով ճանապարհուղող Ունգա-  
րիայի ճանապարհների հաղորդակցութեան մի-

Նիստը պլ. Վեգժին, որը գնաց Անդիխ 1912 թ.  
երկաթուղային դործի դրութեան հետ ծանօթա-  
նալու համար: Առանց անդիխարէն լեզուն զիտ-  
նալու, նա կատարեց այդ ճանապարհորդութիւնը  
բացառապէս էսպերանտոի օգնութիւնով, ամե-  
նուրեք գտնելով սիրալի ընդունելութիւն և փոր-  
ձառու ղեկավարներ:

Ես այլ ևս չեմ ցոյց տալու ուրիշ օրինակ-  
ներ: Չեմ յիշելու թէ ինչպէս յաջախ օտարեր-  
կրացի էսպերանտանակաները, թղթակցութեան մի-  
ջոցով ծանօթանալուց յետոյ գալիս են իրար  
մօտ և հիանալի կերպով իմաստափրում են օ-  
տար երկիրը իրանց այնտեղի բարեկամների օգ-  
նութիւնով: Ես կասեմ միայն՝ էսպերանտոի  
օգուտը ճանապարհորդների համար այնքան ար-  
դէն պարզ է հիմա էլ, որ «Ճուրինդ կլուրների»  
մեծ մասը ընդունել են էսպերանտոն իրանց  
առանձին հովանաւորութեան տակ և եռանդուն  
կերպով տարածում են նրան իրանց գործառ-  
նութեան մէջ և հրատարակում են այդ լեզուվ  
ուղեցոյցներ և ահղեկատուներ. (որպէս օրինակ  
կարող է ծառայել անուանի կուկի ֆիլման):  
Երկաթուղու ծառայողների մէջ (աւելի գերմա-  
նիայում) կան արդէն բազմաթիւ էսպերան-  
տիստներ, կայ մինչև անգամ էսպերանտական  
լրագիր երկաթուղու ծառայողների համար: Շատ  
քաղաքների մէջ տարածում է այդ լեզուն և

տրամուտայի ծառայողների մէջ \*): Վերջապէս, ետ չեն մնում այդ գործի մէջ և հիւրանոցատէրերը, նրանք մտցնում են Էսպերանտօն իրանց ծառայողների մէջ, ճանաչելով նրա օգտակառութիւնը: Պարիզում կան արդէն մի քանի այդպիսի հիւրանոցներ: Այժմ Համ. Էսպ. Ասօցիացիան առանձին ուշադրութիւն է դարձրել այդ հարցի վերայ և հրաւիրել է իւր բոլոր պատուիրակներին և հիւրապատումներին-աշխատել, որքան հնարաւոր է, լայն չափով գրաւել հիւրանոցների և ըստորանների տէրերին միանալու Էսպերանտօի շարժմանը: Հեռու չէ այն օրը, երբ Էսպերանտիստը իւր ճանապարհորդութեան համար կարօտ չի լինիլ ուրիշ լեզուների, բացի իւր թանկագին Էսպերանտօն... .

Գ) Վակառականութիւնը եւ արդինաբերութիւնը:

Բայց ամենամեծ տիրապետութիւն կատարում է Էսպերանտօն վաճառականութեան և արագիւաբերութեան ասպարէզներում, առաւելահասկացան մի ընդհանուր լեզուի գործնական շահը և չեն խնահում ջանը և միջոցներ նրան

\*\*) Բոստերդամում 1912 թ. գործում էին եօթը Էսպերանտական կուրսեր տրամուտայի կօնդուկտօրների և կառապանների համար:

տարածելու համար: Շատ առևտրական պալատ-ներ յատկացնում են բաւականին խոշոր գումարներ տեղական էսպերանտական ընկերութիւնները պահպանելու համար և նրանց կից թիմները (Փրանկ-ֆուրտի էսպերանտօի դասաւանդութիւնը, Ֆրանկ-ֆուրտում, Կարլս-տում—Մայնի վերայ, Բրոմբերգում, Լիդնիցում, բուլցում, Շտեյնիցում, Կասսելում, Լիդնիցում, բուլցում, Շտեյնիցում, Դրէգենում հիմնուել է արև և շատ այլ տեղեր: Դրէգենում հիմնուել է պէն «Առևտրականների Լիդա», որ ընդունել է պէն արտասահմանի թղթակցութեան համար Էսպերանտօն (մօտ 160 ֆիլրմաներ):

Փրանսիան նոյնպէս ետ չէ մնում Գերմանիայից և Գրանսիական առևտրական պալատները եռանգով պահպանում են իրանց Էսպերանտիստներին: Պարիզի մէջ մինչև անգամ սկսեցին հրատարակել Էսպերանտերէն լրագիր առևտրին հրատարակել Էսպերանտերէն լրագիր առևտրի և արդիւնաբերութեան \*): Անգլիան նոյնայցի է մեր լեզուի օգուտը և քայլ պէս հասկացել է մեր լեզուի օգուտի առաջանականութեան և անում այդ ուղղութիւնով և վճռական քայլ Արևմտեան Եւրոպայի բոլոր վաճառականութիւնը կը մտցնէ նրան իւր գործառնութեան մէջ:

Մեր Ռուսիան վերջին ժամանակը նոյնպէս վճռական քայլ է անում այդ ուղղութիւնով և

\*) 1912 թ. ֆրանսիայի յայտնի նախաձեռնող André Michelin նուիրեց 20,000 ֆրանկ որ բաժանուի, որպէս պարզետութիւն էսպերանտերէն աւելի լաւ գիտցող երիտասարդներին:

շնորհիւ առետրի և արդիւնաբերութեան մինիստր պ. Տիմաշև՝ առանձին ուշագրութեանը, վճռուած է արդէն մտցնել էսպերանտօի դաստաւութիւնը, դեռ ևս որպէս ոչ պարտաւորական առարկայ բոլոր նրան ստորագրեալ ուսումնանների մէջ։ Արդէն մի քանի տարի է, որ շարունակ ուսւաց տէրութիւնը ուղարկում է իւր պաշտօնական ներկայացուցիչներին էսպերանտական համաշխարհային կօնդրէսները և այնտեղից դուրս բերած տպաւորութիւնը առանց հետևանքի չէ մնում։

Եթէ աւելի մօտկանանք հարցի գործնական  
կողմին, հարկաւոր կը լինի ցոյց տալ մի ամ-  
բողջ շարք Փիրմաներ և մագաղիններ աշխար-  
հիս զանազան մասներում և զանազան քաղաք-  
ներում, որոնց մէջ կան արդէն էսպերանտերէն  
խօսող գործակատարներ: Այդ կարգին են աշխար-  
հում յայտնի մագաղիններ՝ Լուվը, Մենաժեր  
և Մեծ Բազար Պարիզի մէջ, այդ կարգին են  
բազմաթիւ մագաղիններ և հիմնարկութիւններ  
Տուլոնի, Դրեզդէնի և Լոնդոնի մէջ... Լոնդոնի  
Բրունի յայտարարական գործակալութիւնը ար-  
դէն մի քանի տարի է, որ մացըրել է էսպերան-  
տական թղթակցութիւն օտարերկրացինների հետ,  
նա թղթակցելով մի դէպքում այդ լեզով մի  
գերմանական Փիրմայի հետ, վճռել է այսու-  
հետև, թէ միայն էսպերանտօն միջոց է տալիս

հաստատ համոզուած լինել թէ թղթակցութիւնը  
հասկանալի կը լինէ օտարների համար։ Ներկա-  
յումս անհնար է թուել այն բոլոր ֆիրմաները,  
որոնք իրանց յայտարարութիւնները և ցու-  
ցակները տարածում են էսպերանտերէն լեզ-  
ւով. այդպէս են օրինակ. Բիլցի սանատօրիան  
Դըղգիէնի մէջ, յայտնի առւտօմօբիլական գոր-  
ծարանը, Clement Bayard-ի երկաթի գործա-  
րանները, Consett Sron C<sup>o</sup> գուրգամի մէջ Անգ-  
լիայում, Դըղգիէրի Փայանսի և Մայօլիկի գոր-  
ծարանը Բօդենբախումում, Աւստրիայում յայտնե-  
լուսանկարչական կլիշների գործարանը, կինի-  
մօտորափական ժապաւէնների Goumot et C<sup>o</sup>,  
Դեկոնվիլի տեղափոխուող երկաթուղիների գոր-  
ծարանը, Վակների թանաքի գործարանը Հան-  
նովերի մէջ, Ստեւենսինը Անգլիայի մէջ և ու-  
րիշները. Շատ Փիրմաներ իրանց արդիւնաբե-  
րութիւններին էսպերանտերէն անուններ են  
տալիս, այնպէս որ էսպերանտիստները իրանց  
բազկաթոռի վերայ նստած, կարող են կարդալ  
իրանց լրագիրը, ծխել իրանց սիգարը, խմել  
իրանց շամպանիան, ժամանակը իմանալ իրանց  
ժամացոյցով, շրջել իրանց առւտօմօբիլների վե-  
րայ կամ իրանց օդապարիկներով գրել իրանց  
գրի մեքենայով, երեսները վեր անել իրանց  
վարսաւիրների մօտ և այլն և այլն \*):

\*) Յայտնի են արդէն քանի մի դէպքեր, որ էս-  
պէրանտիստները տւել են իրանց երեխաներին «Ես-  
peranto» անունը և սովորեցրել նրանց մանկութիւնից  
միայն այդ լեզուն:

Այս, թէ որքան է օգնում այստեղ չամ. Էսպ. Ասօցիացիան, ես ասել եմ արդէն և պէտք է յիշեմ միայն, որ նրա հեռաւոր նպատակն է միախմբել բոլոր առևտրականներին՝ համաձայն նրանց առանձին զբաղմունքների և դա կտար նրանց ահապին օգուտ նրանու պատ ուղածեցաւ:

իսկ մինչև այդ նպատակին չենք հասած, էսպերանտոիստները հնարել են իրանց փողի հաշուետեսութեան սիստեման, որը չափազանց յարմար է և նրանց մէջ արդէն լայն կերպով տարածուած է: Նրան առաջարկեց 1907 թ. Զւեցերիայի պրօֆեսոր-էսպերանտիստ դե-Առ-սիւըը, ընդունելով իբրև հիմք մի շատ փոքր միաւորութիւն, որը նա անուանեց speso: Այդ-պիսի տասը միաւորները մօտաւորապէս հաւասար են մի կոպեկի, իսկ հազարը մի ըուբլու (ճիշտար 95 կոպեկի), այդպիսի միաւորների տասը հազարը համապատասխանում են 8 գրամ մաքուր ոսկու. այդ պատճառով այս սիստեմը կախումն չունի բօրսայի գներից (կուրսից):

Կարևոր է յիշել նոյնպէս Լօնդօնի մէջ գոյութիւն ունեցող էսպերանտական չէքի բանկը, որի մէջ էսպերանտիստները և նրանց հիմնարկութիւնները ունին իրանց ընթացիկ հաշիւր, այդ բանկը չափազանց հեշտացնում է նրանց իրար հետ հաշիւ պահելու որոշում:

Մի խօսքով, երկար տարիների փորձը ցոյց

առւեց արդէն, որ կարելի է հաղորդակցել էս-պերանտերէն լեզով ամեն մի առևտրական փիրմայի հետ (կցելով նամակին «փոքրիկ» լեզ-ւի բանալին», որ արժէ շ կոպ.), կարելի է այդ լեզով հեռագրել, ապրանքների պատւէրներ տալ, ստուալ բոլոր հարկաւոր տեղեկութիւնները և այլն \*): Եւ տարէ ցտարի նրա գործածութեան շրջանը շարունակ ընդարձակւում է և ամրա-նում:

Դ) Գրականութիւնը եւ գիտութիւնը

Վ) Գրականութիւնը ։ Ա  
Յաջախ պատահում է լսել այնպիսի պատ-  
ճառաբանութիւն, թէ չարժէ իսպերանտօն սո-  
վորել, որովհետև այդ լեզով կարդալու բան  
չկայ:

Այդ պատճառաբանութիւնը ոչ մի հիմք չունի։ Ներկայումս ամբողջ հողային գնատի երեսին ցըլուած են էսպերանտական պարբերական հրատարակութիւններ՝ ամսագրեր և լրագրներ։ Նրանց թիւը այժմումս 150-ից պակաս չէ \*\*): Նրանց շարքում բացի պրօլետարական ուղղութեան էր 1912

\*) «La Ondo de Esperanto» տպագրվել է 1925 թ. Այս ժամանակին մասին էսպե-  
ռանական աշխարհում առաջարկութեան գրականի հուրիանի մասին էսպե-  
ռանական աշխարհում առաջարկութեան միջոցով գործարա-  
կա ստացել է մինչև 200 պատուէլ (ի միջի այլոց զի-  
նապատճենից, Պարսկաստանից և ուրիշ տեղերից):

\*\*\*) Միմիայն 1912 թ. հիմունի են մինչև 50...

թիւնունեցողները, կանշասերը, որոնք ծառայում են մասնաւոր նպատակների, թէ գիտական և թէ գրականական աւղղութիւնով։ Այդպիսիներից են օր. Պարփղի յայտնի Հաշէտ և ընկ. հրատարակութիւնը «La Revuo» և գիտական «Unirerso», որ լոյս է տեսնում Վոլֆէնբիւտելի մէջ, նրանց մէջ կարելի է գտնել մի շարք շատ հետաքրքիր վէպեր, գիտական և գրականական յօդուածներ և նրանք տպագրուում են բացառապէս էսպերանտելէն լեզով։ Նոյն կարգից է մի և նոյն Հաշէտ և ընկ. ձեռքով հրատարակող «Scienca Gazeto», ի գէպս հարկաւոր է յիշել, որ այդ ընկերութիւնը չափազանց մեծ օգնութիւն է հասցըել էսպերանտական շարժմանը, ամենալժուար ճըք-նաժամին, երբ նա հազիւ հազ պահպանում էր իւր գոյութիւնը։ Այդ ընկ, շնորհիւ լոյս տեսան էսպերանտոգրէն բազմաթիւ հեղինակութիւններ, ինչպէս ինքնուրոյն էսպերանտելէն, նոյնպէս և թարգմանական։ Իսկ նրա օրինակին հետեւցին հրատարակչական ֆիրմաներ և ուրիշ երկրների մէջ, որոնք յանձն առան հրատարակել էսպերանտական շարադրութիւններ, թէ տեղական և թէ օտարերկրացի հեղինակների։ Այդ կարգից են Բելլինի Մեօլլեր և Բորել ֆիրման, «Посредникъ» (միջնորդ) ֆիրման Մօսկայի մէջ և ուրիշները։ Բոլոր մեծ կենտրոններում կան արդէն էսպերանտական գրավաճառանոցներ կամ

էսպերանտական բաժանմունք ունեցողներ։ Մեզ  
մօտ Մօնկայում կայ մասնաւոր էսպերանտա-  
կան մագաղին Տէերսկոյ փողոցի վերայ, ուր  
գտնուում է նոյնպէս «La Ondo de Esperanto»  
(էսպերանտոի ալիքը) պատուական պրօպոդան-  
գական ամսագրի (մասամբ էսպերանտերէն մա-  
սամբ ուսւերէն լեզուներով) խմբագրատունը,  
Նրա տարեկան գինն է միայն 2 ըուբի և նա  
1912 թ. տուեց բաժանորդներին ձրի յաւելուած  
«Կնյզ Սերեբրյաննայ» Գ.Բ. Ալեքսեյ Տօլստոյի  
Մ. Շիգլովսկու գեղեցիկ էսպերանտական թարգ-  
մանութիւնով։  
Եթէ մենք վեր առնենք այդ մագաղինի,  
պարբերաբար լոյս ընծայած, էսպերանտական  
լեզով գրքերի և բուշւրների ցուցակները,  
մենք կը գտնենք այստեղ, բացի զանազան ազ-  
գութիւնների համար տպագրած բառարանների  
և գասագրքերի, բազմաթիւ խոշոր կլասիքական  
շարադրութիւններ եւրոպական գրականութիւնից  
արձակ կամ պօէտիքական թարգմանութիւնով  
գեղեցիկ էսպերանտական լեզով։ Այսպէս ուսւ-  
աչելինակներից թարգմանուած են. Գոգովի «Ре-  
визоръ»-ը (Դ.ր Զամենհօֆի թարգմանութիւ-  
նով), նոյնպէս Գոգովի «Портретъ»-ը և մի քա-  
նով ուրիշ վեպեր, Պուշկինի «Русланъ и Люд-  
мила», «Борисъ Годуновъ», «Полтава» և  
ուրիշները (բանաստեղծ Դիեստանինի պատուա-

կան թարգմանութիւնով): «Демонъ-р, «Княжна Мери», «Ашикъ Керибъ-р նոյն բանաստեղի թարգմանութիւնով, Տուրգենևի «Отцы и Дети» (Կազմիլիր Բէյնի թարգմանութիւնով), նոյնպէս Տուրգենևի «Стихотворенія въ Прозѣ», «Ася» և «Песнь торжествующей любви» (Գեղեցիկ թարգմանութիւններով Դ.-ր. Ա. Ֆիշերի), շատ առաջներ Կրիլովից, բազմաթիւ ջոկատանաւորներ Նեկրասովից, Տիւտչևից, Պուստեկուց, Զեխովից պատմուածքներ, Կորուենկոյի, Գարշնի, Լէօնիդ Անդրեևի, Գօրկու, Արցիբաշևի, Դորոշևիչի, Նադսօնի, Պոլոնսկու Մայկովի և ուրիշների շատ մանր յօդուածներ և հատուածներ: Օտար ազգութիւնների գրականութիւնը, ի հարկէ, ետ չէ մնացել ուստականից, բազմաթիւ կլասիքական հեղինակութիւններ. Փրանսիական, գերմանական և անգլիական արդէն ունին իրանց գեղեցիկ թարգմանիչները, Բայց աւելի նշանաւորն այն է, որ էսպերանտօի օգնութիւնով ճնարաւորութիւն է ստացւում ծանօթանալ Եւրոպայի մանր ազգերի և նոյնպէս այլ երկրների գրականական շարադրութիւնների հետ, որ այլապէս մատչելի չէին լինի հասարակութեանը: Կարևոր է յիշել վերջին ժամանակը հրատարակուած ինքնուրոյն էսպերանտական լեզով այնպիսի շարադրութիւններ, որոնք կա-

րող են գարդարանք համարուել ամեն մի ազ-  
դային գրականութեան մէջ \*):  
Եթէ մենք անցնենք գիտութեանը, հազիւ  
թէ կարողանանք գտնել մի ասպարէզ նրա մէջ,  
թուր չինին արդէն փոքր 'ի շատէ լուրջ աշխա-  
տութիւններ ինչպէս թարգմանական նոյնպէս և  
որ աւելի նշանաւոր է) ինքնուրոյն էսպերան-  
տական լեզով:

Այսպէս մատեմատիկայի ասպարէզում էս-  
պերանտիստները կարող են ցոյց տալ պրօֆ.  
Վօրօ-ի աշխատութիւնները՝ «Analitika Geome-  
tria Absoluta» (2 հատոր) և «Elementoj de la  
Geometrio Absoluta». Ֆօրմացեւնները ունին  
աշխատութիւնների պ. Բուսաօի, զա-  
նոյնպէս լուրջ աշխատութիւն պ. Բուսաօի, զա-  
նազան ազգութիւնների պատկանող իննը հեղիւ-  
նակների օգնութիւնով կազմած «Vade Mecum  
de Internacia Farmacio», ուր բոլոր եւրոպա-  
կան լեզուներից առաջին տեղը տրւած է էսպե-  
կան լեզուներից առաջին տեղը տրւած է է-  
րանտօ լեզուն, որովհետ, ինչպէս կարծում է  
պահանջանայի լեզուն բոլոր եւրոպական լե-  
զունների սինտեզն է, ներկայանալով լոգիկայի և  
պարզութեան օրինակ, նա միակ կապն էր լիրմ-  
պարզութեան օրինակ, շատ միակ կապն էր լիրմ-  
պարզութեան օրինակ, նա միակ կապն էր լիրմ-

\*) 1912 թ. միայն Մօսկովյայի ամսագիրը «La Ondo  
de Esperanto» ստացել է բացենդիի համար 208 նոր  
էսպերանտական գրքեր: Բաւականին աչքի ընկնող մի  
փաստ:

որով և հնաբաւոր եղաւ հրատարակելու այս կօ-  
լեկտիւ աշխատութեանը»: — Զեն մոռացուած  
գիտութեան միւս ասպարէզները, սակայն տեղի  
սղութիւնը չէ թոյլ տալիս կանգ առնել նրանց  
վերայ:

Ես յիշել եմ արդէն էսպերանտական «Գիտական լրագիրը»։ Պէտք է յիշեմ նոյնպէս դրա նման բժշկական լրագիրը, լուսանկարչականը, մանկավարժականը \*), իրաւաբանականը \*\*)... Գիտութիւնը իսկապէս իւր բնոյթով միջազգա-

\*) Унункалауарднебри համար, որոնք շատ անդամ բախտի բերմամբ ընկած են լինում աշխարհիս ամենախոռն անկիւնները, կապերանտօն կարող է անդնահատելի օգնութիւն ցոյց տալ... Իւրանց պաշտօնակիցների հետ թղթակցութիւն սկսելով, նրանք չեն զգար իւրեանց մէնակութիւնը, նրանք կունենան օրինակելի բարեկամներ ամբողջ աշխարհիս երեսին: Փոխանակութիւն հիմքելով պաշտօնակիցների հետ այս կամ այն երկրին պատկանող իւրելով, որոնք պատկերացնում են երկրի կեանքը և բնութիւնը, նրանք կարող կը լինեն կազմել գեղեցիկ ուսումնաբանական մուղետներ (ժողովածուներ), ինչպէս կան արդէն շատ օրինակներ և ուսուցիչների մէջ... Իսկ եթէ ուսուցիչները ճանաչելով կապերանտօնի օգուտը իւրանց համար սովորցնէին այդ լեզուն իւրանց աշակերտներին, աշխարհոմի անդամից կը դառնար ահաղին Esperantojo (կապերանտիպմի երկիր).

\*\*) իրաւաբանները գեռ բաւականաչափ չեն ըմբոններ էսպերանտօի կարևորութիւններ իրաւական մի-

որ քիչ օգուտ չէ բերել իւր համար թանկագին լեզուին և նիւթաւորապէս), Օստալդ, Բուլըէ, Բուլըակ, Կար, Ռիշէ, Ռու և ուրիշ շատերը:

Բայց եթէ միջաղգային լեզուն հեշտացնում է զանազան ազգերի պատկանող գիտնակաների յարաբերութեանը սովորական ժամանակ, եթէ նա միախմբում է նրանց ամսագրերի և լրագրութերի տողերում, ուրեմն որքան աւելի նա պէտք է ժողովների և կօնդրէսների ժամանակ, երբ բազմալեզու ժողովի մէջ կարդում են կամ արտասանում են զեկուցումներ այս կամ այն հարցի վերաբերութեամբ և երբ կարեոր է իսկոյն և եթ հասկանալ բոլոր ճառը և երբ հարկաւորի ընդդիմախօսել կամ լրացնել նրա ենթագրութիւնները... Ամեն մի այդպիսի կօնդրէս յիշեցնում է Բաբելօնի աշտարակաշինութիւնը, ուր խօսում են երեք, չորս եւրոպական լեզուներով և ուր շատ քչերն են հասկանում ինչ որ նրանց, շուրջը խօսում են և կարդում: Ուսափ զարմանալի չէ, որ վաղուց արդէն լսում են, ձայներ, որ թոյլ տրւի էսպերանտօն, որպէս մի ընդհանուր զեկուցման լեզու, իսկ վերջին տարիների մէջ մինչև անգամ սկսեցին խոսել, թէ այդ լեզուն հարկաւոր է ընդունել որպէս պարտաւորական կօնդրէսներին մասնակցողների համար: Եւ կարծիք չկայ, որ կեանքի իսկ լօգիքան կը ստիպէ, որ միջաղգային ժողովների

ժամանակ գործադրութի միայն միջաղգային լեզուն... էսպերանտօի այդ տեսակ գործածութիւնը արդէն եղել է. սկիզբն են դրել երկու մեր երկրացիներ Շիլլովսկիի և Շեստակով դոկտորները, որոնք հուղարկացի 1909 թ. բժշկական միջաղգային ժողովի մէջ իրանց զեկուցումները կարգացին էսպերանտուրէն:

### Ե) Կեանիք միւս ասպարէզները

Շատ ու շատ ես կարող էի դեռ ասել, մատնանիշ անելու համար էսպերանտօի յաղթութիւնները կեանքի մտաւոր և գործնական միւս թիւնները մէջ, սակայն կարիքը ստիպում ասպարէզներու մէջ, սակայն կարիքը կարձական լինել:

Ես յիշեմ ամենից առաջ կաթոլիկ եկեղեցին, որ շատ լաւ է ըմբռնել «մի լեզու» օգուտը իւր համար: «Եթէ մի է հօտը մի է և հոտը վիւր», ուրեմն ամենից առաջ պէտք է մի լինի ու մի լեզուն»: Պիոս Խ-դ փափը շարունակ ու մի լեզուն»: Պիոս Խ-դ փափը տարածելու էսպերանտօն է ամեն մի քայլ՝ տարածելու էսպերանտօն կաթոլիքների մէջ և առանձին կաթոլիկների միւրեկանտօն է արտայայտում կաթոլիկների միւրեկանտօն կաթոլիքների մէջ և առանձին կաթոլիկների միւրեկանտօն է արտայայտում էսպերանտօն լեզուվ, չաղգային կօնդրէսները էսպերանտօնական լեզուվ, որոնք երեք անգամ արդէն կայացել են վերջին ուրեք տարիներում միաժամանակ էսպերանտիունների ընդհանուր կօնդրէսների հետ: Կաթոլիկ-էսպերանտների միախմբելու ու նրանց և առհապերանտների

սարակը բոլոր կատօլիքների մէջ մի ընդհանուր լեզու տարածելու համար հիմնուած են արգէն չորս էսպերանտական ամսագրեր, որոնք հրատարակւում են ոչ առանց պաշտօնական շրջանակի օժանդակութեանը։ Շատ գերմանացի եպիսկոպոսներ իմաստասիրել են էսպերանտօն և ամուր ձեռքով պաշտպանում են նրա տարածումը հոգեւորականների և աշխարհականների մէջ։ Կաթոլիք և մասամբ բողոքական եկեղեցիների մէջ յաջախ արարողութիւնը և քարոզվ կատարւում է էսպերանտական լեզով, առաւել ևս էսպերանտական կօնդրէնների ժամանակ։ Իսկ ուր ծխականները խառն են և խօսում են զանազան լեզուներով (ուր ուրեք Հ. Ամերիքայում) այնտեղ խոստովանութիւնը և Սուրբ հաղորդը կատարւում է էսպերանտօի միջոցով \*):

\*) Լօնդոնի մէջ յայտնի Harecourt Canonbury եկեղեցում ամիսը մի անգամ ժամանացութիւնը կական նորութիւնը ներմուծող տիկին ասում է այդ գունիրից ամենալաւը իրկրային կեանքի ամենաբարձր մար. որ չեզոք լեզուգործածելով ամեն դաւանութեան և աղանդի պատկանող քրիստոնեանները կարող լինին թիւնները և միանալ ընդհանուր սիրով գէտի ընդհանուրի Աստծուն առայլութիւն մատուցանելու հապատակի՝ Աստծուն ծառայութիւն մատուցանելու համար. որ չեզոք լեզուգործածելով ամեն դաւանութեան և առժամանակ մոռանալ իրանց դատարկ հակածառութիւնները և միանալ ընդհանուր սիրով գէտի ընդհանուրի Աստծուածը. այս պատճառով էսպերանտօն կարող է

Սնցնելով դաւանական կեանքից զուտ գործական կեանքին, կը շեշտեմ այն ջանափեռութիւնը, որ արտայայտում են փօստ-հեռագլուխութիւն էսպերանտոն տարածելու հարանց շրջանի մէջ էսպերանտօնը միախմբեց մար, Փօստային դաշնակցութիւնը տէրութիւնները, այժմս հողային գնտի բոլոր տէրութիւնները, (բացի Աւգանստանը և Բելուջաստանը), և մի-ջազգային յարաբերութիւնների ժամ առ ժամ աճեցման պատճառով նա մի ընդհանուր լեզուի ստիպողական կարիք է զգում։ Այստեղ էլ ու-րիշներից առաջ անցաւ գերմանիան։ Դրեզդերիշներից առնի արգէն, էսպերանտականներում գոյութիւն ունի արգէն, էսպերանտականի դաշնակ-րի «միջազգային փօստի պաշտօնեանների դաշնակ-ցութիւնը», այդ լեզով հրատարակւող իրանց լրագրով («Pôsta Esperantisto»)։ Այդ լրագիրը պատրաստում է հիմա մասնագիտական բառան (էսպերանտերէն) փօստ-հեռագրական ծա-րան

ծոսայել ոչ միայն աղգերի, այլ և դաւանութիւնների միախմբելուն»։ (La Ondo de Esperanto, 1913 թ. № 1). «Նոր կատակարանը մեր Յիոսուի Քրիստոսի ար-դէն թարգմանուած է էսպերանտերէն մի քանի ան-դամ։ Աւելի անդիսանտելի է վերջին թարգմանութիւնը, որ կատարուած է Անգլիական և Շոտլանդական թուականին. Աստուածաշունչը թարգմանում է ինքը, Դ-ր Զամբենհօֆը (Եփրայերէնից) և տպագրում է «La Revuo» ամսագրի մէջ.

ոայողների համար: Միւս քաղաքների մէջ բաց-  
ւում են լեզուի դասընթացներ փօստի ծառա-  
յողների համար, որոնց մէջ գտնւում են նրա  
բարձրաստիճանաւոր պաշտօնեաները:

Նոյնպէս ինչպէս փօստը միջազգային է և  
ստիկանութիւնը:

Մի քանի տարի առաջ գլխաւոր սատիկա-  
նական վարչութեան կառավարիչ լեպինը միւս  
տերութիւնների սատիկանական վարչութիւնների  
կառավարիչներին առաջարկեց մայնել Էսպե-  
րանտօն միջազգային յարաբերութիւնների հա-  
մար, որպէս պաշտօնական լեզու: «Յանցաւոր-  
է նա իւր շրջաբերականի մէջ. սատիկանութիւ-  
նը պէտք է որսայ նրանց ամբողջ աշխարհիս  
հանուր լեզու, որ կարողանայ միհամուռ ու-  
նրա նախագծով Պարիզի մէջ հիմնեցաւ Էսպե-  
րանտական լրագիր սատիկանների համար և շատ  
սատիկաններ սովորում են Էսպերանտօն. սովո-  
րիքական (մարդաչափական) բիւռոն հիմնող,  
գերմանիան ետ չէ մնում Ֆրանսիայից այս առ-  
պարէզի մէջ էլ և սատիկանութեան կառավարիչ-  
թիւնով քանազան քաղաքների մէջ ջանասիրու-  
թիւնով քաջալերում են իւրանց ստորագրեալ-

ներին սովորել Էսպերանտօն: Իսկ էսպերան-  
տիստների միջազգային կօնգրէսների ժամանակ  
սատիկանների ամբողջ լմբեր, կանխապէս մաս-  
նաւոր դասաւութիւնով պատրաստուած, ամեն-  
կերպ օգնում են կօնգրէսներին և ցոյց են տա-  
լիս նրանց մէծ օժանդակութիւն:

Առանձին նշանակութիւն է ստացել Էսպե-  
րանտօն կոյրերի համար: Այդ գործին առաջին  
րարկը տուեց Պարիզի մէջ ալլոֆեսոր Կարլ,  
կոյրերի կոմիտեան նախագահը այդ քաղաքի  
մէջ և կոյրերի Էսպերանտական ամսագրի լում-  
բագիրը, «Esperanta ligilo» ամսագիրը տպա-  
բագիրը, է Բրայլի եղանակով: Արդէն կոյ-  
րերի շատ ուսումնարանների մէջ Էսպերանտօն  
մացրած է, որպէս պարտաւորական առարկայ և  
շատ ջերմ օրհնութիւններ սլանում են այդ  
ծայրայեղ թշուառ մարդկանց շրթունքներից  
դէպի միջազգային լեզու հեղինակը: 1912 թ.  
մինչև անգամ անկախ ճանապարհորդութեան  
դէպի եղաւ ուսու կոյր Երօշենկօ ճանապարհորդեց  
Արևմտեան Եւրոպայի մէջ Էսպերանտական գե-  
լեգատների օգնութիւնով: Այդ ուղեւորութիւնից  
վերադառնալուց յետոյ նրան մնում էր միայն  
վկայական լընդհանուր միջազգային լեզու օգուտը  
առանձնապէս կոյրերի համար \*):

\*) «La Ondo de Esperanto»-ի, № 1 մէջ զետեղած  
գործիկ ծանօթութեան մէջ պ. Երոշենկօն առում է

Շատ մեծ նշանակութիւն ունի էսպերանտոն և զինւորականների համար, Պատերազմը միշտ պատահում է այլալեզու ազգութիւնների մէջ և շատ անգամ նրա մէջ մասնակցում են մի քանի զանազան ազգութիւններ։ 1900 թ. պատերազմը Զինաստանի մէջ, երբ Զինաստանի հողի վերայ գործում էին բոլոր նշանաւոր պետութիւնների գորագնտերը, առանձին կերպով շեշտուեցաւ միջազգային լեզուի կարևորութիւնը։ Պատահեցան շատ դէպքեր այն ժամանակ, երբ զօրաբաժինները բոլորովին այն կողմը չէին գնում, ուր հրամայած էր նրանց ընդհանուր, բայց այլազգի հրամանատուններից և այդ պատրում։ Այնպիսի այլալեզու զօրքի մէջ, ինչպէս է օրինակ, Աւստրիականը, զանազան ազգութիւնների զօրեղ մենամարտութեան հանդէպ իրանց անկախութեան համար, չէզօք լեզու ընդունելը դառնում է ուղղակի պարտաւորական կարիք։ Անմիջապէս կապուած է զինւորական գործի վերջը. «Ես հիմա կարող եմ ասել որ Ալազինի լապան չէր կարող ինձ աւելի մեծ օգնութիւն ցոյց տար մողուած եմ, որ ոչ մի հանձար արաբական առակնեկան կանքի հնձ աւելի նպաստել, քան իսկաշամինհօֆը»։

Հետ «Կարմիր Խաչը», ուր տարէ ցտարի աւելի հետեւ կերպարանք է ստանում էսպերանտու պահանջը՝ բոլոր բժշկների, ողորմած քոյրերի և առհասարակ բոլոր ծառադպրմած կամաց կամ օժանդակ միջոցների համար։ Կան արդէն օժանդակ միջոցների համար, (օր. ոռուսաց լեզուի երգումկու ձեռնարկը), ներ, (օր. ոռուսաց լեզուի երգումկու ձեռնարկը), որի մէջ ժողովուած են կարևոր տերմիններ, որի մէջ ժողովուած կամ կամ ակարունք կարող են պէտք գալ բժշկին կամ «Կարմիր Խաչին» ծառայողներին։ Արևմտեան Եւրոպայի, առանձնապէս իսպանիայի մէջ, Ֆրանցիայի, առանձնապէս իսպանիայում մէջ, արած մըցսիայի մէջ արդէն մեծ քայլեր են արած մըցսիայի մէջ կամ «Կարմիր Խաչի» նելու էսպերանտոն զօրքի և Ալազինի կամ հիմնարկութիւնների մէջ։ Ֆրանսիայում կամ արդէն զօրագնտեր, որոնց մէջ օֆիցիաների և զինւորների կէս բաժինը էսպերանտերէն լեզուն զինւորների կէս բաժինը էսպերանտերէն լեզուն գիտեաներ։ Օդային գնացքների հաղորդական աշխարհութիւնները մէջ աղքերի մէջ ցութեան առաջ անհետանում են աղքերի մէջ

ամեն կերպ պատճէշներ, ոչնչանում են այնքան հոգածարութիւնով պաշտպանուող սահմանները: Ոչ գետերը, ոչ ճահիջները, ոչ լեռները արդէն արգելք չեն աւխատօրների համար, հեռու չեն այն օրերը, երբ ծովերը և ովկիանոսները այլ ևս սարսափելի չեն լինիր քաջախրտ աւխատօրների, օդի տիրապետների համար: Սակայն ընդմիշտ կը մնայ մարդկանց համար զարհուրելի թշնամի հողային գնաի ազգութիւնների մէջ տիրող այլալեզւութիւնը, որ աւելի բարդուում է օդամեքենաների չափազանց արագութիւնով: Իսկ բնչպէս ճշտութիւնով հաշուել, թէ որտեղ կարիքը կը ստիպէ աւխատօրին ցած իջնել գետնի երեսը: Որպէս ճշմարիտ է ասում ականաւոր աերոպլաններ շինող ֆարմանը՝ երակերանտօն աւխացիայի անցաթուղթն է, առանց որի անհար է նրա զարգացումը: Նոյն ֆարմանը և ոչ պակաս անուանի աւխատօր Արչդիկօն, երկուսն էլ խանդոտ էսպերանտիստներ են և ներկայումս ֆրանսիայում անհնար է պիտօնի կոչում ստանալ առանց էսպերանտական լեզուն իմանալու: Արչդիկօնը մի անհման գիրք է գրել «Pourquoi je sui devenu esperantiste», որի մէջ ապացուցանում է բոլոր կարևորութիւնը՝ էսպերանտօն լայն տարածել հողային գնաի ազգութիւնների մէջ:

Այս գլուխի վերջը ես կասեմ, թէ չկայ

մարդկային կեանքի որ և է ասպարէզ, ուր մի լնդիանուր միջազգային լեզուն չը ցոյց տար պերանտօն ընտրելուց յետոյ միջազգային լեզուի պերանտօն լուծուած է վերջնականալէս և անդառ հարցը լուծուած է պէտք է պարտաւորական նալի. նրան սովորելը պէտք է պարտաւորական մարդկութեան ամեն մի մարդու համար, որին թանկ է լինի ամեն մի մարդու համար, որին թանկ է մարդկութեան յառաջադիմութիւնը:

### VIII.

ԷՍՊԵՐԱՆՏՕՒ ՏԱՐԱԾՈՒԽԸ ՍՇԽԱԾՈՒԽԸ ԵՐԵՎԱՆԻ ՄԻՆ

Թէպէտե նախընթաց գլուխների մէջ ուր ուրեք և յիշել եմ էսպերանտօն տարածման մասին այս կամ այն երկը մէջ, սակայն պատկերը լրացնելու համար, հարկաւոր եմ համականդու առնել այժմս այդ հարցի վերայ արում կանգ առնել այժմս այդ հարցի վերայ առնելի մանրամասնորէն և աւելի ընդարձակօրէն: Կանգնած էսպերանտական շարժման գլուխը կանգնած պէտք է ճանաչել ֆրանսիային, այդ անփոփոխ դայեկին ամեն մի մարդասիրական շարժման: Պայեկին ամեն մի մարդասիրական շարժման գարիպը-խոկական էսպերանտիզմի մայրաքաղաքն է: Վերջին ժամանակները նրան այցելող էսպերանտօն ժամանակակիցները ասում են, թէ այնտեղ այլ ևս լանտիստները ասում են, թէ այնտեղ այլ ևս պէտք չէ ֆրանսերէն լեզուն գիտնալը, ամեն մի քայլափոխի դուք կարող էք էսպերանտիստի

Հանդիպել, մագաղինների մեծմասնութեան մէջ խօսում են Էսպերանտերէն, պանդոքների և հիւրանոցների՝ մէջ հանդիպում ես Էսպերանտերէն խօսող ծառաների։ Ներկայումս Պարիզի մէջ գոյութիւն ունին մինչև 19 Էսպերանտական ընկերութիւններ, լոյս են տեսնում տասնից աւելի Էսպերանտական լրագիրներ և ամսագրեր. լեզուի դասընթացներ քաղաքի զանազան թագերի մէջ 70-ից անց է, 23 տպարաններ Էսպերանտական տառեր ունին... Ֆրանսիայում լիսվին արդէն հասունացել է պարլամենտներմուծելու Էսպերանտօն բոլոր ուսումնարանների մէջ սովորեցնելու հարցը \*): Բայց հիմա մինչև այդ օրէնքը չէ անցկացել, շատ

քաղաքներ մտցնում են իրանց ուսումնարաններ  
ըի մէջ լայն ծառալով էսպերանտօի ուսումը,  
նաև յատկացնելով նոյնպէս այդ լեզուի մաս-  
նաւոր դասընթացներին։ Այդ կարգից են. Բօր-  
դո, Լիլ, Գրենօրլ, Դիժօն և այլք։ Եւ հետ զհետէ  
այդ քաղաքները, կարծես թէ, վարակում են  
էսպերանտիզմով, ամբողջ հասարակութիւնը  
փոքրից սկսած մինչ մեծը, հարուստներից և  
գիտնականներից սկսած մինչև խղճուկները և  
հասարակ մշակները բանկում են խանդոս ձըդ-  
տումով այդ լեզուն սովորելու և հնար չկայ  
այդպիսի վարակման առաջն առնել... Եւ ինչու  
այն բանի առաջն առնել, որը նշան է մարդ-  
կութեան յառաջադիմութեան...  
Երկրորդ տեղը պէտք է յատկացնել Գեր-  
մանիային։ Սակայն այն միջոցին, երբ Ֆըան-  
սիան ամենից առաջ յափշտակուեցաւ գործի  
զաղափարական կողմով, Գերմանիան որպէս  
միշտ և ամեն բանի մէջ կըուեց էսպերանտովի  
գործնական նշանակութիւնը և համոզուելով, որ  
նա ճիշտ է, հաստատալիս և առանց այս և այն  
կողմը թեքուելու գործը առաջ տարաւ իւր եր-  
կրի մէջ։ Ես ցոյց տուի արդէն, թէ ինչպէս հե-  
տաքրքրուած է այդ լեզուով Գերմանիայի առև-  
տրական դասակարգը, ես յիշեցի փօստ. հեռա-  
գրական և երկաթուղու վերայ ծառայողների  
գրական և երկաթուղու մամուլը մամուլը  
ընկերութիւնները և այլն։ Ընդհանուր մամուլը

մտել, թէ Գերմանիայում էսպերանտիդմի բար-  
գաւաճումը մօտ ապագայում աւելի կը ուժե-  
ղանայ, քան թէ Ֆրանսիայում և վերջինս պար-  
տաւորուած կը լինի տալ նրան առաջին տեղը  
այդ ասպարեզում։ Գերմանացին ամեն ինչ կա-  
տարում է կանոնաւորապէս և նախագծած, նրա  
գործունէութեան մէջ կայ հաստատամտութիւն  
և հաստատ վճռականութիւն մտածած նպատա-  
կին համար։ Այդ յատկութիւնները նրանք լրիւ-  
արտայայտում են էսպերանտոն տարածելու  
գործում \*):

\*) Դրան փայլուն ապացոյց կարող է ծառայել  
այս վերջին ամիսները տեղի ունեցող գէովը. 1912 թ.  
Միւսիւնի մէջ կաղմակիլուեցաւ էսպերանտական  
ընկերութիւն, որի մէջ անդամակցում են շատ բարձր-  
աստիճանի և ազգեցութեան տէր մարդիկ։ Այդ ընկե-  
րութիւնը ընդունեց այս անունը. «Propaganda Լցօ-  
պարկութիւն» (պրօպագանդի ընկերութեան զվար-  
պերանտո Պուլակ-քաղաքի)։ Այդ ընկերութեան էլե-  
կտոր նպատակն էլ արդէն լւոր ձևոք բերած հողաբանի  
վերայ և ժողոված միծ գումարով շինել «Էսպերանտո  
Պուլակ-քաղաքի», որի մէջ կարողանային բնակութիւն  
հաստատել միայն էսպերանտիստները և նրանց ընտա-  
կանութիւնն է։ Հողաբաժինը աւել է դրա համար (աւելի,  
նիքները։ Հողաբաժինը մէթը, Միւսիւնի 13 կիլո-  
քան միլիոն քառակուսի մէթը, հարուստ բանկիր  
մէտք նկառ իզար գետի ափին) հարուստ բանկիր  
Շուլերը, որ գործի մէջ դրեց խոշոր դրամական միջոց-  
ներ և այդպիսով մօտեցաւ և գաղափարով և գործնա-  
կանապէս ձեմար կութեանը, և անշուշտ չի կանգնիր

շատ է խօսում այդ լեզուի մասին և եռանդա-  
գին խորհուրդ է տալիս ուսանել այդ լեզուն,  
ի նկատի առնելով այն անթիւ օգուաները, որ  
նա կարող է տալ։ Արդէն ձայներ են լսում  
մտցնել այդ լեզուն Գերմանական կայորութեան  
Աֆրիքայի հպատակների մէջ, որովհետեւ այդ  
ճանապարհով նրանց հեշտ կը լինի առաջ մղել  
դէպի համամարդկային կուլտուրան։ Հազիւ թէ  
ներկայում հնարաւոր լինի գտնել քաղաք կամ  
որքան և իցէ նշանաւոր գիւղ, ուր չգտնուի  
էսպերանտօի դասաւանդութիւն։ Էսպերանտիստ-  
ների ժողովները և նրանց ցուցահանդէսները  
միշտ ջերմ համակրութեան և գովասանքի  
արժանանում։ Առանձնապէս պէտք է յիշել Դը-  
րեզէն, Լեայլցիզ, Առւգրուրդ, Գանհովէր,  
Միւնիեն, Մազգերուրդ, Պօլստամ Բերլին և  
ուրիշները։ Լեյլցիզում կայ էսպերանտական  
ճեմարան մշտական դասընթացով, հրատարակ-  
չութիւն այդ լեզուվ գրած զրբերի։ Դըրեզէնի  
մէջ, որը ես յիշել եմ մի քանի անդամ, բացի  
էսպերանտական ճեմարանը, որ պահպանում է  
տէրութեան հաշւով, գոյութիւն ունի էսպերան-  
տական գրադարան, որին տեղ է յատկացրած  
տէրութեան շինութեան մէջ և որը, ինչպէս և  
նրան կից գանուղ մուզէյը տէրութեան սեփա-  
կանութիւնն է \*): Հազիւ թէ կարելի է երկ-

\*) Բացի այդ Սակսոնիայի տէրութիւնը յատկա-  
ցը է որոշ գումար էսպերանտոն տարածելու համար։

Գէրմանիայից յետոյ պէտք է գալ Անդլիանին: Այստեղ նոյնպէս շարժումը զուտ գործնական գոյն է ստացել և ամենքից տուաջ նրանով հետաքրքրուած են առևտրական շըջանները: Վերջին տարիները (իսկապէս 1907թուականից, երբ կազմուեցաւ էսպերանտիստների համաշխարհային կօնդրէսը կեմբրիջի մէջ), էսպերանտիզմի յառաջադիմութիւնը Անդլիայում շատ մեծ չափ է ստացել: Կօնդօնի մէջ գոյութիւն ունին մօտ 40 էսպերանտական դասընթացներ (մա-

յետագայում էլ ծախսերի առաջ: Ահազին ձեռնարկութեան մակարդակը մշակել է ընկերութիւնը կազմակերպող պ: Շլաֆը և տեղական ճարտարապետ Սիվերուը, իսկ կատարում է միջազգային մասնագէտաների կօմիտետի հակողութեան ներքոյ, որոնց մէջ գտնուած են երեք ոռու: Սրդէն հողի մի մասը բաժանած է հողաբժինների և սկսել են տներ շինել, որոնց մի մասը կանխապէս զնել են զանազան ազգութիւնների պատկանող էսպերանտիստներ: Բացի տները, որոնցից իւրաքանչիւրը շրջապատած է պարտէզով, որով քաղաքը ստանում է պուրակի կերպարանք, կը շինուին թատրօն, կազինօ, ուսումնարաններ, բաղնիս և զանազան հասարակական շինութիւններ: Զի անցնի և միքանի տարի, էսպերանտիստները կը շինեն իւրեանց սեփական քաղաքը, որի մէջ կը խօսեն միայն էսպերանտիստներին կանաչանանան իւրանց մայրավայրը, որի վերայ կը ծածանուի կանանչ գրօշակը... Աւելորդ է առեւ, թէ ինչ մեծ զարկ կը տայ այդ ձեռնարկութիւնը մեր գործի յառաջադիմութեանը...

սամբ տէրութեան հաշով), իսկ առևտրական դպրոցների մէջ էսպերանտօի հարցաքնութիւնը կատարուում է հաւասարապէս, ինչպէս միւս օտար լեզուների հարցաքնութիւնը:

Հետեւալ տեղը պատկանում է Հիւս. Ամերիկայի Միացեալ Նահանգներին, որոնք այդ գանգաւայր և այսպէս տեղական էսպերանտիստայից: Բայց և այսպէս տեղական էսպերանտիստները գանգաւայրում են, թէ անգլօ-սաքսերը չեն սիրում օտար լեզուներ սովորել և այդ շկամութիւնը ցոյց են տալիս և էսպերանտօի վերաբերութեամբ: Սակայն այստեղ կան մի քանի պատուական էսպերանտական ամսագրեր և մըդպատուական էսպերանտական ամսագրեր և մըդպատուական էսպերանտիւն, որ առաջարկուի ուում է ուժեղ քարոզութիւն, որ առաջարկուի պատուական գողովին մտցնել ուսումնարան: Այս մէջ էսպերանտօի դասաւանդութեան իւրների մէջ էսպերանտի ուժ տալու համար գիրը: Այդ պրօպագանդային մի սրամիտ միջոցի, ամերիկացիները գիմեցին մի սրամիտ միջոցի, աւելորդ չէր մինի ընդունել և նրանց եւրոպ աւելորդ չէր մինի ընդուներին: Նրանք տպագրեցին պացի եղբայրակիցներին: Նրանք տպագրեցին մի միլիօն պրօպագանդական թերթիկներ և հարմակուող կաւոր թւով ուղարկում են իրանց համակրող ներին, ինպրելով հասցնել այն լրագիրներին, որոնց նրանք սովորաբար կարգում են, ինդրելով որոնց նրանք սովորաբար կարգում են, իրանց լրագիրների և մերագրներին հրատարակել իրանց լրագիրների մէջ մօտաւոր համարներում: Մեզ համառ տեսարձի յառաջադիմութեանը է, որ այդ միջոցը ղեկութիւններից իմացւում է, որ այդ միջոցը

Խոստանում է շատ լաւ հետեանքներ տալ: Զատ զատ շատաների մէջ հարկաւոր է յիշել Մերի-լանդը, ուր 1910 թ. մարտ ամսից սկսած, էսպերանտօն սովորելը պարտաւորական է դառել բոլոր ուսումնարանների մէջ: Մերիլանդին հետևում են Մասսաչուզետս, Կոնէկտիկուտ, Օրիգօն, Օգայօ և ուրիշները, ուր նոյնպէս հասունում է արդէն էսպերանտօն ուսումնարանների մէջ մտցնելու միտքը և որպէս պարտաւորական առարկայ: Այս բոլորին մեծ զարկ տուեց էսպերանտական կօնդրէսը Ուաշինգտոնում 1910 թ., երբ էսպերանտօն չափազանց հետաքրքրեց բարձր շրջաններին:

Միացեալ Նահանգներից յետոյ տեղ պէտք է տալ էսպանիային, ուր շարժումը պաշտպանում է ինքը Ալֆօնս XIII թագաւորը, նա չափազանց հետաքրքրուած է էսպերանտօին յաջողութիւն տալու հարցով և ինչպէս ես վերել յիշեցի երկու անգամ պարզեատրել է արդէն Զամենհօֆին շքանշաններով: Շնորհիւ այդպիսի բարձր հոգանաւորութեան հասունանում է իսպանիայի մէջ մտցնել բոլոր ուսումնարաններում էսպերանտօն: Զինւորական ուսումնարանների մէջ արդէն հետզհետէ մտցնում են էսպերանտօն որպէս մի պարտաւորական առարկայ: \*)

\*) 1913 թ. սկիզբ Հիւսիսային Ամերիկայի էսպերանտիստները գիմնիցն բոլոր նորեկ էսպերանտական իմացների լրագիրների միջոցով, առաջարկելով կանոնական հանդիպել նրանց գալատեան մասին, խոստադանութեան նրանց համար, աշխատանքի աղբիւր ճարել և այլն: («La Onde Esper.» 1913., № 2, էր. 39):

Եր միայն իսպանիայից յետոյ կարելի է գտան մեր Ուուսիան, որը, ինչպէս վերեր ասած է, առաջինն էր, որ ընդունեց դ. օ Զամենհօֆի իդէան և տուեց առաջին աշակերտները նրա մեծ գիւտին: Ցենզուրայի խստոթիւնները և առհասարակ 90 թւականները քաղաքական կեանապի պայմանները յետաձգեցին այդ շարժումը և յետոյ շատ տարիներ Ռուսիան, համարեա, այդ կողմից կենդանութեան նշան չէր ցոյց տալիս: Սակայն կրակը վառ էր մասցել և չէր հանդչում: Եւ արքունական Դումայի հիմնարկութեան հետ ի միասին նա նորէն վասուեցաւ, թէպէտ այստեղ էլ պատահում էին անյաջող երեսթներ, յանձին էսպերանտիզմին կաչող չարամիտ մարդկանց ունիւն իւրանց անձնական նպականց, որոնք ունիւն իւրանց նրան 1911 թ. Սատակները և շատ մասեցին նրան կայն վերջին ժամանակների գէպէերը ցոյց են տալիս, որ «էսպերանտիզմը գալարում է լինել «վառ ծծումբ», որ նրանով հետաքրքրուած են և բարձր վրջանները, ճանաչելով նրան որպէս մի ձգտումն՝ տարածել միջազգային լեզուի գիշութիւնը և Ռուսիայում և գրանով չթոյլ տալ ուութիւնը և Ռուսիայում և էրութիւններից, նրան ետ մնալ միւս լուսաւոր տէրութիւններից, նրանց եռանգույն ձգտումից գէպի ընդհանուր յառաջադիմութիւնը և նիւթեաւոր բարգաւառումը \*): Ով ներկայումս ետ է մնում նա ոչնագումը \*): Ով ներկայումս ետ է մնում նա ոչնա-

\*) 1912 թ. էսպերանտօի 25-ամեակը տօնելիս, երկու իսպանական քաղաքներ յանձին իւրեանց քարգային վարչութեան հանդիսաւորապէս միացան այդ շարժմանը և Տերասա քաղաքը հեղինակի անունը տեղ հրապարակներից մէկին, իսկ Սաբատէլը և այց իւր հրապարակներից մէկին:

Հանում է: Ուրիշները հաւաքում են նրա տեղը կեանքի բարիքը և նրան մնում է ապրել այն փշանքներով, որ թափում են առաջաւորների սեղանից... Պատուական և ազնիւ սկիզբը, որ դրել է Առևտուի և Արդիւնաբերութեան Մինիստը պ. Տիմաշելը \*), մտցնելով էսպերանտօի գասաւանդութիւնը նրան ստորագրեալ ուսումնաբանների մէջ, գուցէ, արձագանք գտնի և Լուսաւորութեան Մինիստրութեան մէջ և այն ժամանակ էսպերանտիզմի խնդիրը լուծուած կը լինի անդառնալի կերպով։ Ճշճարիտ է ասել մի խանդու և տաղանդաւոր էսպերանտիստ պրիվատ-դրցենտ Ժենեկի համալսարանի պ. Պրիվատ-դրցենտ այցելեց և Ռուսիան էսպերանտիզմի պրօպագանդի համար. «Քարոզել էսպերանտօն հասակաւորների մէջ և մոռանալ էրիտրասարդութիւնը, այդ նոյնն է, ինչ լրցնել առանց հիմք ունեցող շիշը... Սակայն որպէս և

\*) 1912 θ. Մինիստրների խորհրդի նախագահ  
վ., Ն. Կոկովցել Ժինեվի պրիվատ զօցենստ պ. Պրիվա-  
յին, որ Խոռոչա էր եկել Էսպերանտոի պրօպագանդի-  
համար, յայտնեց, որ կասավարութիւնը ճանաչում է  
Էսպերանտոն զուտ գիտական բնոյթ ունեցող շարժումն-  
և թէ Էսպերանտոստիստների գործունէութիւնը Խոռոչա-  
յում և մասնաւորապէս նոր Էսպերանտական բնկերու-  
թիւններ հիմնելը չի հանդիպի ոչ մի արգելքի աղմի-  
նիստրացիայի կողմից («La Ondo de Esperanto»  
1912 թ., № 2):

իցէ էսպերանտիզմի պլռօպլագանդան թողել է  
Ռուսիայում առանց այն էլ հաստատուն հիմք:  
Արժէ միայն աչքէ անցնել նորերս Մօսկվայում:  
Հրատարակած «Հասցեացուցակ ոռւս էսպերան-  
տիստների», որի մէջ ցոյց է տւած այդ լեզուին  
հետևողների միայն փոքրագոյն մասը (մոտ-  
3000) Ռուսիայում, որ հասկանալի լինի, թէ  
սերմերը լաւ են ցանած և բաժանած ոռւսական  
հողի երեսին, մնում է նրանց ծլել և առատ-  
հունձ տալ: Եւ կայ հաստատուն հիմք կարծել,  
որ այդ գեղեցիկ ժամանակը մեզնից հեռու-  
չէ \*):

Ոռւսիայի մէջ շարժման կենտրօն է ներչէ<sup>\*)</sup>: Ռուսիայի մէջ շարժման կենտրօն է ներշայանում Մօնկան, նրա մէջ գոյութիւն ունին, «Էսպերանտական ճեմարան», որը մշտական՝ դասաւանդութիւն է պահպանում, գրավաճառաւոց էսպերանտական շարադրութիւնների, ամսագիր «La Ondo de Esperanto», որի մասին ես խօսել եմ արդին աւելի վաղ, մի քանի ընկերութիւններ և խմբեր էսպերանտօի (ի միջի աւելանում է պլ.

\*) Առաջին զարկը այդ կողմից պատկանում է պ. Միլիերին, որպէս մինիստր Տիմաշևի օգնականին, որ վաղճանել է արդէն ի ցաւ Ռուսիայի էսպերանտիստների: 1911 թւականից բարեհաճ կերպով մկանց վերաբերուել գէպի էսպերանտօն ծովալին մինիստրութիւնը, որի համար այդ լեզուի օգուտը, առանց կարծիքի, շատ մեծ է:

ալոց համալսարանում), տեղական լրագիրները տպում են ժամանակ առ ժամանակ համակրական յօդուածներ և յայտնի հրատարակչական «Պօրենտիկ» ֆիրման ի լոյս է ընձայել մի քանի գրքեր և բոօշիւրներ որ նորած են այդ լեզուին: Մօսկվայից յետոյ ներկայանում է Պետերբուրգը: որի մէջ դեռ 1912 թ. հիմնուեցաւ մեծ և գործունիայ «Espero» ընկերութիւնը, նա մեծ ազգեցութիւն ունէր արմատացնելու էսպերանտիզմը Ռուսիայի մէջ և եթե կամենաք ներկայանում էր առաջին մեծ ընկերողթիւնը ընթացս ընկերութիւնների ծագելուն ամբողջ աշխարհիս մէջ, (մինչեւ այդ ընկերութիւնը հիմնուել են, բացի արդէն յիշուած նիւրենբերգի Վոլեապիւկական խումբը, ընկերութիւններ 1889 թ. Մօսկվայում և Սօֆիայում, 1890 թ. Շալկէք Գերմանիայում և Իվանո-Վոլոգնեսենսկում, շնորհիւ հոչակաւոր էսպերանտիստ Գրաբովսկու, 1891 թ. Միւնխենում, Ֆրեյբուրգում Շւեդիայի Ուպսալք.) Մի ժամանակ Պետերբուրգում նոյնպէս հրատարակում էր «Ruslanda Esperantisto» լրագիրը, որը երկու անգամ ընդհատվում և նորից հրատարակում էր փողի պակասութիւնից: Պետերբուրգից յետոյ դալիս են մի շարք ուրիշ մեծ քաղաքներ, արդէն բոլորովին ամրացած էսպերանտական շարժումով և մշտական լեզուի դասընթացներով և այլն: Այդ քա-

դաքներն են, Վիլնա, Վարշավա, Կովովո, Թիֆ-լիս, (նրա մէջ կայ ընկերութիւն 1896 թւականից երկու տարի հրատարակում էր «Կայկազա- Էսպարանտո» լրագիրը), Վարդիվոստոկ, Խար-կով, Սերպուխով: Սարատով (նրա մէջ գտնում է աշխարհում ամենահարուստ էսպերանտական հեղինակութիւնների գրադարանը, նա պատկա- նում է Գեորգ Գաւիդովին \*) և հրատարակում է «Volga Stelo») Ռոստով-Դոնի վերայ, Տամակ, Օմսկ, Օդեսա, Կիև \*\*), Կրօնշտադտ (շատ ե- ռանդուն պլոտագանդա են մղում կոտին և կրօնշտադտակիյ վեստնեկ լրագիրը), Կոստրոմա, Լուգովում, Նարվայ, Ռիգա (նրա մէջ մօտ ժա- մանակ հրատարակում էր «Riga Stelo» լրագի- րը (Ռիգայի աստղ), որը ընդհանուեցաւ նոյն նիւթաւորի պակասութեան պատճառով), Զապօ- րյոժիե-Կամենսկօյէ, Օրէնբուրգ, Սիմբիլսկ, Վլ- լադիկավկազ, Կրասնոեարսկ, Խարբին (շատ ե- ռանդուն ընկերութիւն, որի վուլէն է կանգնած:

\*) Պ. Գաւիդովի եւր գրադարանի կազմած ցու- ցակը, որի մէջ գտնում է 10,000 էսպերանտական հե- ղինակութիւն ինքնուրոյն և թարգմանական, տպագր- ում է Գերմանիայում:

\*\*) «Verda Stelo» (Կանաչ աստղ) ընկերութիւնը հաշում էր 1912 թ. վերջը 430 անդամ: Տեղական «Ֆրանսուայ» հիւրանոցը խոստացել է առանձնապես օժանդակել էսպերանտիստներին:

յայտնի էսպերանտիստ կազի-Գիրել) և այլ քաղաքներ, Շատ համալսարաններ և բարձրագոյն ուսումնարաններ հիմնել են իւրեանց ուսանողական-էսպերանտական շրջաններ, որոնց ուր ոււայինը, ուր եռանդուն կերպով մասնակցում է յայտնի պրօֆ. Բրանդտը, որ շատ է նպաստել պի էսպերանտօն և օգնել է հիմնելու Մօնկւա-յում «Էսպերանտիստների ճեմարան»։ 1912 թ. Մայիսին հիմնեցաւ Պետերբուրգում նոր ընկերութիւն, որին անդամակցում են շատ ազդեցութեան տէր անձինք, ինչպէս Դէյսու, Տայն, Կոլենկօ (Փինանսնեղի մինիստրի խորհրդի անդամ), Գ. Ի. Իվանիցիկի (հաղորդակց. մինիստրի խորհրդի անդամ), պ. Մալինին, Պլխաւոր ուսումն. տեսօւչ առեւր. և արդիւն. նախարարութեան, պրօֆ. Սիվերս (անդամ գիտն. կօմիտ. առեւր. և արդ. նախարարութեան), պ. Մտիտկիչ (Ս. Նոյն 1912 թ. Պետերբուրգում հիմնուեցաւ նոր հինգ խումբ և նրանցից աւելի գործունեան է քրքրական էր 1912 թ. գեկտեմբ. 11 այդ կուր մէջ կազմակերպած նուագահանդէսը, նա ունեցաւ շատ մեծ յաջողութիւն և ուշադրու-

թիւն դարձրեց մեր լեզուի վերայ ոչ միայն պաշտօնական անձանց և պրօֆէսորների ոյլ և պաշտօնական անձանց ու պրօֆէսուարների, որոնք նոյնպէս սկսեցին էսպերանտերէն սովորել։  
Ուսուիայից յետոյ իտալիան է, ուր ներկայում մզւում է եռանդուն պրօպագակդա էսպերանտո լեզուի օգտին և այս (1913 թւականի մէջ) ենթադրւում էր այստեղ (Զենովյանում) կանոնական համաշխարհային կօնդրէսը կա-էսպերանտական համաշխարհային կօնդրէսը կա-յացնել։ Ալիներև է, այդ գէպքը կը նպաստէր էսպերանտօի տարածմանը այդ գեղեցիկ երկրի բոլոր քաղաքների մէջ, սակայն զժբախտաբար, բոլոր քաղաքների մէջ, սակայն զժբախտաբար, գեռ և չպարզուած պատճառներով, հետեւեցաւ այդ կօնդրէսի տեղափոխութիւնը Զւեցերիայի Բելին մայրաքաղաքը։ Յետոյ փոքր տէրութիւններից հարկաւոր է յիշել Զւեցերիան, ուր գըտննեւում է Համ. էսպ. Ասօցիացիի կենտրոնը, Բուլ-ղարիան, որը շատ եռանդուն կերպով գեռ 1889 թ. միացել է մեր գործին և ուր պատրաստում են էսպերանտօն մտցնել, որպէս պարտաւում է անձնական առաջնորդութիւնը արդէն տապարական գասաւանդութիւնը արդէն տապարաւորական գասաւանդութիւնը ամենուրեք), Բումինան, բածուած է այստեղ ամենուրեք), Բումինան, ուր շարժմանը հովանաւորում է Եղիսաբէթ թագուհին, Սամոս, որտեղ 1910 թ. իշխան Անդրէսը կազմանուիլ կոպասիսի հրամանագրութիւնը էսպերանտօն մտցրած է, որպէս պարտանով էսպերանտօն մտցրած է, որպէս պարտա-

ւորական առարկայ բոլոր ուսումնարանների  
մէջ՝\*), Բելշիա, որի մէջ շարժումը ամրացել է  
1911 թ., Համաշխարային էսալ. կօնդրէսի շնոր-  
հիւ և այլ երկրներ:

Եթէ Եւրոպայից անցնենք Ամերիկայ, բայց  
Հիւս. Ամեր, Միացեալ Նահանգներից, հարկա-  
ւոր է յիշել Բրազիլիան, ուր էսպերանտօն, որ-  
պէս ոչ պարտաւորական մացրած է շատ ու-  
սումնարանների մէջ և ուր դէպի այդ լեզուն  
վերաբերում են մեծ համակրանքով և իշխանու-  
թիւնը մասսամբ նպաստում է լեզուի դասաւան-  
դութեանը \*\*\*): Զիլին, ուր կարծեօք, չէք զբա-  
նիր մի քաղաք, որի մէջ գոյութիւն չունենայ-  
քիչ թէ շատ նշանաւոր էսպերանտական ընկե-  
րութիւն կամ շրջան, Կոլումբիա, որտեղ ինքը  
պրեզիդենտը, Վեստրեապօն, էսպերանտօն ընդու-  
նել է իւր հովանաւորութեան տակ, Մեքսիկան,  
ուր արգէն հարց է բարձրացրած. ազգային ժո-  
ղովը մացնել ինդիր էսպերանտօն որպէս առու-

<sup>\*)</sup> 1912 թ. Կապօսիսին սպանեցին և շարժումը սկսեց կաղել:

\*\*) 1912 թ. Բրազիլիայի մտնկավարժական ժողովը ցանկութիւն յայտնեց, որ երկրի բոլոր ուսումնարանների մէջ մտցուի խսպերանտօն։ Serpiere շատի իշխանութիւնը արդէն առաջազրել է մացնել այդ լիգուն քաղաքային ուսումնարանների և զիմնադիաների մէջ։

առաւորական առարկայ բոլոր ուսումնաբանների  
մէջ և ուրիշ տեղեր: Այդ բոլոր տէրութիւննե-  
րի մէջ գոյութիւն ունին էսպերանտական լրա-  
գիւներ:

Ասիայում ամենից աւելի սկզբ  
պով էսպերանտուստների մէջ հաշուում են այս-  
պիսի անձինք, ինչպէս, կոմս Գայազի, գեներալ  
Օկու և ուրիշները: Վերջին տարիները եռան-  
դուն կերպով առաջ է եկել և Զինաստանը, ուր  
այժմեան հասարակապետական կառավարութիւ-  
նը մեծ համակրանքով է վերաբերում դէպի  
էսպերանտօն և նրա լուսաւորութեան մինիստր  
Տսային աշխատում է մացնել նրան տէռութեան  
ուսումնարանների մէջ (նպատակ կայ մինչև  
անգամ հիմնել առանձին տերութեան էսպերեն-  
տական դպրոց Պեկինի մէջ): Պարսկաստանում  
(Թաւրիզի մէջ) նոյնպէս հիմնուած են էսպերան-  
տական դասաւանդութիւններ, սովորում են  
70 աւելի ուսանողներ և վինում են ժողո-  
վուրդի ուշադրութիւնը գլաւող էսպերանտական  
ժողովներ և տեղ անդ մագազինների մէջ լուսում  
է արդէն էսպերանտական խօսակցութիւն: Իսկ  
ոմն Աբգուլ-Բահա, կրօնաւոր աղանդի առաջա-  
սորը (որի մէջ հաշուում են մօտ երեք միլիօն  
աղանդաւորներ) յայտարարեց, որ էսպերանտօն  
պարտաւոր են սովորել բոլոր աղանդաւորները,

առանց բացառութեան կանանց և երախաների, որովհետեւ պարսկական սուրբ գրքերի մէջ ասուած է, որ ընդհանուր լեզուն կը լինէր ոմենամեծ բարիքը մարդկութեան համար \*) կարենոր է յիշել, որ Երուսաղէմում ևս գոյութիւն ունին էսպերանտական շրջաններ, իսկ Տիրոջ գերեզմանի վանքի մէջ ուժտաւորներին տըրում են բացազրութիւններ ի միջի այլոց էսպերանտերէն լեզով, տեղական կառավարութիւնը հրտարակում է արդէն իւր բոլոր յայտարարութիւնները մակագրութիւնները և աֆիշաները ոչ միայն տեղական լեզուներով, այլ և էսպերանտերէն \*\*):

Լուրջ յառաջադիմութիւն ունի էսպերան-

\*) Նոյնը Աբդուլ-Բահան կրկնեց 1913 թ. էդինբուրգում (Շօտլանդիա) տեղական էսպերանտախմտական հանդիսաւոր ժողովում, ուր ներկա էին մոտ 800 հոգի, մեծ մասամբ հոգևորականներ: Այդ ժողովում Աբդուլ-Բահան ասաց ի միջի այլոց. «Փառաբաններ Աստծուն, որ էսպերանտական լեզուն արդէն ստեղծուած է: Մենք հրամայեցինք մեր բոլոր հետևողներին սովորել այդ լեզուն և նա կարճ միջոցում կը տարածուի տմբողջ արևելքում»:

